



ՀԻՄՆՈՒԱԾ  
1918ԻՆ  
Կ. ՊՈԼԻՍ



# Հ.Մ.Ը.Մ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



2007



ՀԻՄՆՈՒԱԾ  
1918ԻՆ  
Կ. ՊՈԼԻՍ



# Հ.Մ.Բ.Մ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



2007



Հ. Մ. Ը. Մ.ի  
Շուշանաձաղիկը  
(Տես՝ յօդուած 134, էջ 46)




Հ. Մ. Ը. Մ.ի Նշանակը  
(Տես՝ յօդուած 134, էջ 46)



Հ. Մ. Ը. Մ.ի Դրօշակը  
(Տես՝ յօդուած 8, էջ 12)



Հ. Մ. Ը. Մ.ի Սկառուտական  
Դրօշակը  
(Տես՝ յօդուած 9, էջ 12)



## **ՅԱՌԱԶ ՆԱՀԱՏԱԿ**

**(ՔԱՅԼԵՐԳ Հ.Մ.Ը.Մ.Ի)**

Դաշնաւորում՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Յեղիկակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՅ

**Յառա՛ջ նահատակ ցեղի անմահնե՛ր,  
Վեց դարու անմոռ վրեժի գրահներ,  
Կատարն հայրենի լերանց հեռագոյն,  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:**

**Հսկայ նուիրման  
Տորմի՛ղ հըրաթել,  
Կամաւո՛ր բանակ,  
Յառա՛ջ անսասան,  
Յառաջ անդէղել,  
Դեպի յաղթանակ:**

**Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
Տարագիր հայն իր կեանքը տորոգեց,  
Երէկ շղթայուած՝ այսօր ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:**



*p* *Cresc*

— Pash' h- p- p- g- q- q- zash' t- a- a- q- h- ho — Luz' h- p- p- d- a- p-  
 — Luz' q- h- p- p- q- q- a- zash' t- a- a- q- h- ho — Luz' h- p- p- d- a- p-

— shy h- p- p- p- h- ho — Luz' h- p- p- d- a- p-  
 — Luz' h- p- p- d- a- p- h- ho — Luz' h- p- p- d- a- p-  
 — shy h- p- p- p- h- ho — Luz' h- p- p- d- a- p- h- ho — Luz' h- p- p- d- a- p-

— a-az sh- a- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho  
 — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho  
 — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho — a-az sh- a- a- h- ho

Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը մշակուեցաւ եւ, յետ քուէարկութեան, իր ամբողջութեան մէջ վաւերացուեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի անդրանիկ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին կողմէ, որ գումարուեցաւ 11, 12 եւ 13 Դեկտեմբեր 1974ին, Պէյրութի մէջ, Լիբանան:

Հ.Ս.Ը.Ս.ի մօտ վաթսունամեայ պատմութեան մէջ անկիւնադարձ կազմող այս ժողովին, ուր հիմը դրուեցաւ Միութեան համագաղութային կառոյցին, կը մասնակցէին Սփիւռքի գանազան շրջաններէն ընտրուած 23 իրաւաստու պատգամատրներ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրուած եղբայրներ, որոնք գոյացուցին Հ.Ս.Ը.Ս.ի Առաջին Գերագոյն Ժողովը:

Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը ներշնչուած է Միութեան անգիր ոգիէն եւ ժողովըրդավար սկզբունքներէն, որոնք կը կազմեն բարոյական ամրակուռ վեմը երիտասարդական գաղափարապաշտ մեր կազմակերպութեան:

*Պէյրութ, 1974*

- **Առաջին բարեփոխում՝ 1979, Պրզգմ. Բ. Ընդհ. Ժողով:**
- **Երկրորդ բարեփոխում՝ 1983, Պրզգմ. Գ. Ընդհ. Ժողով:**
- **Երրորդ բարեփոխում՝ 1991, Պրզգմ. Ե. Ընդհ. Ժողով:**
- **Չորրորդ բարեփոխում՝ 1999, Պրզգմ. Է. Ընդհ. Ժողով:**
- **Հինգերորդ բարեփոխում՝ 2003, Պրզգմ. Ը. Ընդհ. Ժողով:**
- **Ներկայ բարեփոխութիւն՝ 2007, Պրզգմ. Թ. Ընդհ. Ժողով:**

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱՆՈՒՆ

Միութիւնս կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկաուորներ:

## ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է.-

ա) Պատրաստել ֆիզիքապէս փոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի փեր հայեր եւ փիպար քաղաքացիներ,

բ) Սորվեցնել Միութեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,

գ) Զարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պարասխանափոտութեան եւ պափոտի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,

դ) Համակել անոնց միփքն ու սիրփը մարզական ազնրւագոյն ոգիով:

## ՄԻՋՈՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ը իր նպատակը կ'իրագործէ,-

Ա. Սկստություններ,

Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

Գ. Դասախօսություններով եւ հրապարակային ձեռնարկներով,

Դ. Հրապարակություններով,

Ե. Ակումբներով եւ մարզարաններով:



# Կ Ա Ն Ո Ն Ա Ք Ի Ր



## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

**307. 1.-** Հ.Ս.Ը.Մ.ին կրնայ անդամակցիլ ամէն հայ անհատ, առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան, երբ կ'ընդունի **Միութեան Ծրագիր-Կանոնագիրը** եւ կ'ենթարկուի անոր կանոններուն եւ որոշումներուն:

**307. 2.-** Միութեան անդամակցելու տրամադիր անհատը պէտք է գրաւոր դիմում կատարէ իր բնակած վայրի Հ.Ս.-Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան, նուազագոյնը երկու տարւան երկու Հ.Ս.Ը.Մ.ականներու երաշխաւորութեամբ:

**307. 3.-** Թեկնածուն Հ.Ս.Ը.Մ.ի անդամ կը դառնայ մասնաճիւղի վարչութեան համաձայնութեամբ:

**307. 4.-** Իւրաքանչիւր անդամ կը կատարէ իր բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնները հանդէպ Միութեան:

**307. 5.-** Հ.Ս.Ը.Մ.ական մը չի կրնար մաս կազմել մարզական եւ սկաուտական այլ միութիւններու: Այլ խումբերու մասնակցութեան պարագան կը կարօտի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան հաւանութեան (ըստ շրջանի ներքին կանոնագրութեան):

**307. 6.-** Շրջանէ շրջան, կամ մասնաճիւղէ մասնաճիւղ փոխադրուող անդամ մը պարտի ներկայացնել իր միութենական հաստատագիրը, տրուած մասնաճիւղի վարչութեան եւ վաւերացուած Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան կողմէ:

**307. 7.-** Անդամ մը չի կրնար միաժամանակ մաս կազմել ստորադաս եւ գերադաս մարմիններու կամ յանձնախումբերու:

# ԴՐՕՇԱԿՆԵՐ

**ՅՕԴ. 8.-** Հ.Ս.Ը.Մ.ի դրոշակն է.-



տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Հ.Ս.Ը.Մ.ի դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 9.-** Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտութեան դրոշակն է.-



տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.

տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.

Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտութեան դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՅՕԴ. 10.-** Հ.Ս.Ը.Մ.ը ունի հետևեալ ժողովները.-

- Ա. Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով
- Բ. Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողով
- Գ. Շրջանային Ներկայացուցչական ժողով
- Դ. Պատգամաւորական Ընդհանուր ժողով:

**ՅՕԴ. 11.-** Վերոյիշեալ ժողովներէն համապատասխան կարգով կը բխին հետևեալ մարմինները.-

- Ա. Մասնաճիւղի Վարչութիւն
- Բ. Մեկուսի Շրջանի Վարչութիւն
- Գ. Շրջանային Վարչութիւն
- Դ. Կեդրոնական Վարչութիւն:

**ՅՕԴ. 12.-** Ժողովներու եւ վարչութիւններու որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ: Բացառութիւն կը կազմեն Կանոնագրով նախատեսուած պարագաները (Տեսնել՝ էջ 18 Յօդ. 33 Ա, էջ 20 Յօդ. 44ի ծանօթը, էջ 25 Յօդ. 73 եւ էջ 31 Յօդ. 111):

**ՅՕԴ. 13.-** Վարչութիւն մը լուծուած կը համարուի, եթէ իր նստաշրջանի ընթացքին կորսնցնէ իր կազմի մեծամասնութիւնը: Նման պարագայի՝ վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել զինք ընտրող ժողովը՝ առ ի տնօրինութիւն:

### ՄԱՍՆԱԾԻՒՂ

**ՅՕԴ. 14.-** Նուագագոյնը 18 տարիքը բոլորած տասնհինգ անհատներ հաշուող խմբաւորում մը կրնայ կազմել Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղ մը: Նորաստեղծ մասնաճիւղը օրինական կը նկատուի, երբ կը ստանայ գերադաս վարչութեան վաւերացումը:

**ՅՕԴ. 15.-** Իւրաքանչիւր քաղաք կ'ունենայ միայն մէկ մասնաճիւղ: Անհրաժեշտութեան պարագային Շրջանային

Վարչութեան արտօնութեամբ կարելի է ստեղծել մէկէ աւելի մասնաճիւղեր:

## **ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՅՕԴ. 16.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը (վարչութեան գործունէութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի տարին մէկ անգամ: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական Ընդհանուր Ժողովներ գումարել:

**ՅՕԴ. 17.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներուն իրաւասու ձայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները:

**ՅՕԴ. 18.-** Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

**Ծանօթ.-** Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, Անդամական Ընդհանուր երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները տեղեակ պահել Անդամական Ընդհանուր Ժողովի գումարումէն եւ անհրաժեշտ պարագային՝ յետաձգումէն:

**ՅՕԴ. 19.-** Անդամական Ընդհանուր Ժողովը, որուն հաշւետու է մասնաճիւղին վարչութիւնը.-

Ա. Կը լսէ ու կը գնահատէ մասնաճիւղի վարչութեան տեղեկագրով ներկայացուած բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

Բ. Կու տայ որոշումներ եւ կ'ընէ թելադրանքներ մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

Գ. Կ'ընտրէ մասնաճիւղի վարչութիւն:

Դ. Ի պահանջեալ հարկին կ'ընտրէ կանոնագրի սահմանած թիւով ներկայացուցիչներ՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին համար:

Ե. Կ'ընտրէ հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբ:

## ՇՐՋԱՆ

**30Գ. 20.-** Շրջան կը համարուի այն նահանգը կամ նահանգները, երկիրը կամ երկիրները, որոնք ունին առնուազն 3 մասնաճիւղեր, եւ որոնք միասնաբար կը հաշուեն նուազագոյնը 250 անդամ:

**30Գ. 21.-** Շրջանը կը գործէ Ներքին Կանոնագրութեամբ:

**30Գ. 22.-** Շրջանը կը ղեկավարուի Շրջանային Վարչութեամբ, ընտրուած Շրջանային Ներկայացուցչական ժողովէն եւ վաւերացուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**30Գ. 23.-** Այն շրջանը, ուր Շրջանային Վարչութիւն գոյութիւն չունի, կը կոչուի Մեկուսի Շրջան, եւ կ'ունենայ իր Ներքին Կանոնագիրը, որ կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**30Գ. 24.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի նուազագոյնը երկու տարին անգամ մը:

**Ծանօթ 1.-** Շրջանները պարտին գումարումէն նուազագոյնը մէկ ամիս առաջ տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, իրենց Անդամական Ընդհանուր ժողովներուն (Մեկուսիներու պարագային), Շրջանային Ներկայացուցչական ժողովներուն (Շրջանայիններու պարագային), գումարման մասին, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

**Ծանօթ 2.-** Շրջանային կամ մեկուսի շրջան կը գումարէ յատուկ ժողով (Շրջանային Ներկայացուցչական ժողով - Անդամական Ընդհանուր ժողով) այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութենէն ստացած է Պատգամաւորական ժողովի օրակարգը:

**30Գ. 25.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է մասնաճիւղերու պարզ մեծամասնութիւնը, եւ նաեւ ձայնի իրաւունք ունեցող ներկայացուցիչներու՝ պարզ մեծամասնութիւնը:

**30Դ. 26.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին.-

- Ա. Մասնաճիւղերու ընտրուած ներկայացուցիչները:
- Բ. Մասնաճիւղերու վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ:
- Գ. Շրջանային վարչութեան ներկայացուցիչը:
- Դ. Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը:

**30Դ. 27.-** Մասնաճիւղերու ընտրելի ներկայացուցիչներուն թիւը կը ճշդուի հետեւեալ ձևով.-

- Ա. Մինչեւ 25 անդամ ունեցող մասնաճիւղ մը`  
1 ներկայացուցիչ
- Բ. 26- 50 անդամ ունեցողը` 2 ներկայացուցիչ
- Գ. 51- 75 անդամ ունեցողը` 3 ներկայացուցիչ
- Դ. 76- 100 անդամ ունեցողը` 4 ներկայացուցիչ
- Ե. 101- 150 անդամ ունեցողը` 5 ներկայացուցիչ
- Զ. 151- 200 անդամ ունեցողը` 6 ներկայացուցիչ
- Է. 201- 500 անդամ ունեցողը` 7 ներկայացուցիչ
- Ը. 501- 800 անդամ ունեցողը` 8 ներկայացուցիչ
- Թ. 801-1200 անդամ ունեցողը` 9 ներկայացուցիչ
- Ժ. 1200էն ետք իւրաքանչիւր 500 անդամի`  
1 ներկայացուցիչ

**30Դ. 28.-** Մասնաճիւղի մը, Շրջանային Ներկայացուցչական ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտականութեան լրիւ կատարումով:

**30Դ. 29.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին.-

- Ա. Շրջանային վարչութեան մնացեալ անդամները:
- Բ. Շրջանային խորհուրդներէն եւ Շրջանային Յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:
- Գ. Շրջանային ընդհանուր խմբապետ/խմբապետուհին:
- Դ. Շրջանային խմբապետն ու խմբապետուհին:

**30Գ. 30.-** Շրջանային ներկայացուցչական ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ չորրորդ համեմատութեամբ: Հրաւիրեալներուն կէտը կ'ընտրուի Շրջանային ներկայացուցչական ժողովին կողմէ եւ մնացեալ կէտը կը հրաւիրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**30Գ. 31.-** Անհրաժեշտ պարագային, կրնայ արտակարգ Շրջանային ժողով գումարուիլ Կեդրոնական Վարչութեան կամ Շրջանային Վարչութեան հրաւերով եւ կամ մասնաճիւղերու վարչութիւններու առաջարկով:

**Ծանօթ.-** Վերջինի պարագային, երբ Վարչութիւն մը պատճառաբանւած ձեւով արտակարգ Շրջանային ժողովի առաջարկ ներկայացնէ, Շրջանային Վարչութիւնը պարտաւոր է այս առաջարկը փոխանցել միւս մասնաճիւղերու վարչութիւններուն՝ առնելու համար անոնց կարծիքը: Երբ մասնաճիւղերու վարչութիւններու 2/3 համեմատութիւնը համաձայն գտնուի առաջարկին, Շրջանային Վարչութիւնը պարտի արտակարգ Շրջանային ներկայացուցչական ժողով գումարել:

**30Գ. 32.-** Շրջանային ներկայացուցչական ժողովը.-

Ա. Կը լսէ մասնաճիւղերու վարչութիւններու երկամեայ գործունեութեանց միացեալ եւ ամփոփ նիւթաբարոյական տեղեկագիրը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Շրջանային Վարչութեան գործունեութիւնը:

Գ. Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունեութեան ուղեգիծը:

Դ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի ներքին Կանոնագիրը:

Զ. Կը պատրաստէ Շրջանային Վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ մասնաճիւղերու ցեմզը:

Է. Կ'ընտրէ Շրջանային Վարչութիւն:

Ը. Ի պահանջեալ հարկին՝ կ'ընտրէ Կանոնագրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին համար:

**ՅՕԴ. 33.-** Ներքին Կանոնագրի վերաբերող.-

Ա. Յօդուածներուն քուէարկութիւնը կը կատարուի ձայնեղով երկու երրորդ մեծամասնութեամբ:

Բ. Յօդուածներու բարեփոխութիւնները ի զօրու կը դառնան Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք միայն:

**ՅՕԴ. 34.-** Ժողովը կրնայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Ներքին Կանոնագրին մէջ, պայմանով որ փոփոխութեան առաջարկները առնուազն երեք ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր մասնաճիւղերուն եւ Անդամական Ընդհանուր Ժողովներու քննութեան:

## **ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՅՕԴ. 35.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը Հ.Ս.-Ը.Ս.ի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են Հ.Ս.Ը.Ս.ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն: Կը գումարուի չորս տարին անգամ մը:

**ՅՕԴ. 36.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին.-

Ա. Շրջաններու ընտրուած պատգամաւորները (Տեսնել Յօդ. 39),

Բ. Մեկուսի շրջաններու ընտրուած պատգամաւորները (Տեսնել Յօդ. 39),

Գ. Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններէ մէկական ներկայացուցիչ,

Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

**Ծանօթ.-** Մեկուսի Շրջան մը եթէ հարիւրէ նուազ անդամ ունի կ'ունենայ մէկ ներկայացուցիչ, որ կ'ընտրուի Անդամական Ընդհանուր Ժողովէն:

**ՅՕԴ. 37.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին.-

Ա. Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները,  
Բ. Կեդրոնական Վարչութեան կողմէ քառամեայ շրջանի մը համար նշանակուած յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:

**30Գ. 38.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդ համեմատութեամբ: Հրաւիրեալները կը նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ հիմնուելով շրջաններէ եւ մեկուսի շրջաններէ եկած առաջարկներու վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու թիւին մէկ չորրորդը իր կողմէ նշանակել:

**30Գ. 39.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող պատգամաւորներու թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով.-

Ա. 100- 250 անդամ՝	1 պատգամաւոր
Բ. 251- 500 անդամ՝	2 պատգամաւոր
Գ. 501- 750 անդամ՝	3 պատգամաւոր
Դ. 751-1000 անդամ՝	4 պատգամաւոր

Ե. Յաւելեալ իւրաքանչիւր հազար անդամի համար՝ մէկ պատգամաւոր: Վերջին 500 անդամէն աւելին կ'իյնայ հազարի իրաւունքին մէջ:

**30Գ. 40.-** Շրջանի մը Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

**30Գ. 41.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը մասնակցին.-

Ա. Շրջանները իրենց շրջանի պատգամաւորներով, որոնք պարտին ունենալ լիազօրագրեր, վաւերացուած զիրենք ընտրող Ժողովներու դիւաններու կողմէ:

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեանց ներ-

կայացուցիչը, որ պարտի ունենալ լիազորագիր, վաւերաց-  
լած համապատասխան վարչութեանց դիւաններուն կողմէ:

**307. 42.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին  
պատգամաւոր կրնայ ընտրուիլ առնուազն տասը տարի  
անընդմէջ Հ.Ս.Ը.Ս.ի մաս կազմած անդամ մը:

**307. 43.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը օրի-  
նաւոր կը նկատուի, երբ ներկայ են Շրջաններու եւ իրաւա-  
սու ձայնով պատգամաւորներու պարզ մեծամասնութիւն-  
ները:

**307. 44.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը.-

Ա. Կը լսէ Շրջանային եւ Մեկուսի Շրջաններու Վարչու-  
թեանց քառամեայ գործունէութեանց ամփոփ տեղեկագրե-  
րը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Կեդրոնական  
Վարչութեան բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

Գ. Կը ճշդէ Միութեան յառաջիկայ շրջանի ընդհանուր  
գործունէութեան ուղեգիծը:

Դ. Կը կազմէ Կեդրոնական Վարչութեան պիւտճէի նա-  
խահաշիւը եւ կը կատարէ շրջաններու ցենզի բաշխումը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ Հ.Ս.Ը.Ս.ի Ընդ-  
հանուր Ծրագիր-Կանոնագիրը:

Զ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանի մը մէջ առկախ մնացած  
հարցերը:

Է. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն:

**Ծանօթ.-** Կանոնագրի վերաբերեալ յօդուածներու քուէարկութիւնը  
կը կատարուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**307. 45.-** Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը կըր-  
նայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Հ.Ս.Ը.Ս.ի Ընդ-  
հանուր Ծրագիր-Կանոնագրին մէջ, պայմանով, որ փոփո-  
խութեան առաջարկները առնուազն վեց ամիս առաջ յանձ-  
նուած ըլլան բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու

Վարչութիւններուն եւ ժողովներու քննութեան՝ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

**30Գ. 46.-** Ճշդուած ժամանակէն առաջ բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ.-

Ա. Կեդրոնական Վարչութեան պահանջով,

Բ. Շրջաններու եւ Սեկուսի Շրջաններու երկու երրորդի առաջարկով:

**Ծանօթ.-** Երկրորդ պարագային, Շրջանային կամ Սեկուսի Շրջանի Վարչութիւն մը, Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու իր հիմնաւորեալ առաջարկը վաւերացնել տալէ ետք Շրջանային Ներկայացուցչական կամ Սեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ, զայն կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան, որ իր կարգին՝ այս առաջարկը իր նկատողութիւններով կը յղէ Շրջաններուն եւ Սեկուսի Շրջաններուն առնելու համար ամոնց տեսակէտը այս մասին: Ունենալէ ետք բոլոր Շրջաններու եւ Սեկուսի Շրջաններու երկու երրորդի գրաւոր հաւանութիւնը՝ բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողով գումարելու մասին, Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր ժողով:

## ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**30Գ. 47.-** Իւրաքանչիւր մասնաճիւղ կ'ունենայ իր մասնաճիւղի Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովին կողմէ, մէկ տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**30Գ. 48.-** Մասնաճիւղի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Յ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

**30Գ. 49.-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Շրջանային Վարչութեան հաւանութեամբ:

**307. 50.-** Մասնաճիւղի Վարչութեան կազմը կը վաւերացուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**307. 51.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կը վարէ մասնաճիւղի մը միութենական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ու Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներու սահմանին մէջ:

**307. 52.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ մարմիններու եւ ժողովներու գործունէութեանց:

**307. 53.-** Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունէութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, որուն առջեւ պատասխանատու է հաւաքաբար:

**307. 54.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Շրջանային Վարչութեան կը դրկէ.-

Ա.Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ընդհանուր Ժողովին ատենագրութիւնները:

Բ.Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիր:

**307. 55.-** Մասնաճիւղի Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Մասնաճիւղի Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Շրջանային Վարչութեան՝ առ ի տնօրինում:

**307. 56.-** Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, որ կը պատրաստուի ու կը տրամադրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**30Գ. 57.-** Իւրաքանչիւր Շրջան կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ, երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**30Գ. 58.-** Շրջանային Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երեք տարուան Զ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի մը վարչութեան, շրջանային խորհուրդի մը կամ շրջանային յանձնախումբի մը:

**30Գ. 59.-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Շրջանային Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**30Գ. 60.-** Շրջանային Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար. ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**30Գ. 61.-** Շրջանային Վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**30Գ. 62.-** Շրջանային Վարչութիւնը կը վարէ շրջանի մը միութեանական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու որոշումներու սահմանին մէջ: Հետամուտ կ'ըլլայ կազմելու նոր մասնաճիւղեր:

**30Գ. 63.-** Շրջանային Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ մարմիններու եւ ժողովներու գործունէութեանց:

**307. 64.-** Շրջանային Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունէութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Շրջանային Ներկայացուցչական ժողովին, որուն առջեւ պատասխանատու է հաւաքաբար:

**307. 65.-** Շրջանային Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը դրկէ.-

Ա.Վարչական ժողովական նիստերու եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովին ատենագրութիւնները,

Բ.Մասնաճիւղերուն յղած շրջաբերականները,

Գ.Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունէութեան եւ շրջանի մասին տեղեկագիր:

**307. 66.-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է իր անունով լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու իր մասնաճիւղերու վարչութեանց նիւթական եւ բարոյական գործունէութիւնը քննելու, ներքին հարցերը լուծելու եւ ուղղութիւն տալու համար:

**307. 67.-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է մասնաճիւղի վարչական կազմ մը լուծելու նիւթական սայթաքումներու, անգործունէութեան, որոշում-հրահանգներու հանդէպ անտարբերութեան եւ մասնաճիւղի ներքին կեանքին մէջ ստեղծուած դժգոհութեանց պատճառով:

Նման պարագաներու, Շրջանային Վարչութիւնը անմիջապէս կը նշանակէ վարչական կազմ, որուն առաջնահերթ պարտականութիւնը կ'ըլլայ առաւելագոյնը մինչեւ երեք ամիս յառաջացնել մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողով:

**307. 68.-** Բացառիկ պարագաներու՝ Շրջանային Վարչութիւնը իրաւասու է նշանակովի վարչութիւն յառաջացնել մասնաճիւղի մը մէջ:

**307. 69.-** Շրջանային Վարչութիւն մը կրնայ գործավար ունենալ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի որոշումով:

**307. 70.-** Միայն Շրջանային Վարչութիւնը կրնայ իր շըրջանին մէջ միջ-մասնաճիւղային ձեռնարկներ, հանդիպումներ եւ սկաուտական բանակումներ կազմակերպել:

Պարագաներու բերումով այդ պարտականութիւնը կըրնայ յանձնել մասնաճիւղի մը:

**307. 71.-** Շրջանային եւ Սեկուսի Շրջանի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**307. 72.-** Շրջանային եւ Սեկուսի Շրջանի Վարչութիւնները պարտաւոր են Կեդրոնական Վարչութեան վճարել Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ որոշուած ցեմզը, ամէն տարի կանոնաւորաբար:

**307. 73.-** Շրջանային Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Շրջանային Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

## **ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**307. 74.-** Հ.Ս.Ը.Մ.ի գործադիր գերագոյն մարմինն է Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

**307. 75.-** Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ, գաղտնի քուէարկութեամբ եւ ծայներու պարզ մեծամասնութեամբ: Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9, 11 կամ 13 անդամներէ եւ կ'ընտրուի չորս տարուան համար:

**307. 76.-** Կեդրոնական Վարչութիւնը իր կազմէն որեւէ պատճառով պակսող անդամին տեղ իր կազմը կ'ամբողջացնէ:

**307. 77.-** Կեդրոնական Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար, ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**307. 78.-** Կեդրոնական Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ առնուազն 10 տարուան Զ.Մ.Ը.Մ.ական մը, որ շրջանի մը Շրջանային Վարչութեան անդամ կամ Շրջանային Վարչութեան մակարդակի յանձնախումբի մէջ եղած է կամ վարած՝ համապատասխան պաշտօն:

**307. 79.-** Կեդրոնական Վարչութեան կը պատկանի Զ.Մ.-Ը.Մ.ի Ծրագրի, կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը:

**307. 80.-** Կեդրոնական Վարչութիւնը կը գործադրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումները եւ կը հսկէ անոնց գործադրութեան՝ շրջաններէն ներս:

**307. 81.-** Կեդրոնական Վարչութիւնը կը հսկէ, որ Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու որոշումները եւ Շրջանային Վարչութեանց գործունէութիւնը չհակասեն **Սիութեան Ծրագիր-Կանոնագրին** եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն:

**307. 82.-** Շրջաններու պահանջով, կամ անհրաժեշտ պարագային իր որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը միութեանական գործերուն համար կրնայ ներկայացուցիչներ ղրկել շրջանները, որոշ պարտականութեամբ:

**307. 83.-** Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է պահել ատենագրութեան, նամակագրութեան, շրջաբերականներու եւ հաշուական համապատասխան թղթածրարներ,

զորս իր գործունեութեան տեղեկագրին հետ կը ներկայացընէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ որուն պատասխանատու է հաւաքաքար:

**307. 84.-** Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ կազմակերպել համա-Յ.Ս.Ը.Ս.ական հանդիպումներ, սկաուտական բանակումներ եւ մարզական խաղեր, հաւաքատեղիի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան գործակցութեամբ:

**307. 85.-** Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեակի աւարտին կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, որու զումարումի թուականէն վեց ամիս առաջ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն կը դրկէ ժողովի օրակարգը:

**307. 86.-** Բացառիկ պարագաներու, Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է լուծելու Շրջանի Վարչական կազմ մը եւ անոր տեղ նորը նշանակելու:

Նշանակուած վարչութիւնը մինչեւ վեց ամիս պարտաւոր է հրաւիրելու Շրջանային Ներկայացուցչական կամ Անդամական Ընդհանուր Ժողով, ընտրելու համար նոր վարչութիւն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**307. 87.-** Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ կ'ունենան իրենց ներքին կանոնագիրը, համաձայն շրջանի պայմաններուն, հաստատուած համապատասխան ժողովներու ընթացքին, եւ վաւերացուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**307. 88.-** Այս Կանոնագրութեան եւ կազմակերպական կանոններու մեկնաբանութեան իրաւունքը կը պատկանի Յ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան:

**307. 89.-** Շրջաններու Ներքին Կանոնագրութիւնը մեկնաբանելու իրաւունքը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

**307. 90.-** Այս կանոնագրութեան վերաբերեալ որեւէ փոփոխութիւն կատարելու իրաւունքը կը պատկանի Զ.Ս.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

## ԸՆՏՐԱԿԱՆ

**307. 91.-** Տասնութ տարիքը լրացուցած եւ առնուազն վեց ամիս Զ.Ս.Ը.Մ.ի շարքերուն անդամակցած բոլոր Զ.Ս.Ը.Մ.ականները իրաւունք ունին քուէարկելու:

**307. 92.-** Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէարկութեամբ:

Քուէներու ընդհանուր թիւէն կը զեղչուին ճերմակ քուէները եւ մնացեալին կէսէն աւելին ստացողը ընտրուած կը համարուի, պայմանով որ ճերմակ քուէներուն թիւը ընտրելու իրաւունք ունեցողներու թիւի կէսէն աւելի չըլլայ:

## ՆԻՒԹ-ԱԿԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ

**307. 93.-** Միութեան հասոյթի միջոցներն են. անդամավըճարներ, մուտքի տուրքեր, միութեանական հանդէսներէ եւ մրցումներէ գոյացած գումարներ, նուէրներ, հանգանակութիւններ, կտակներ եւ մնայուն հասոյթի աղբիւրներ:

**307. 94.-** Վարչութեան մը արտօնուած չէ Միութեան գանձը առետրական շահարկումի ենթարկել: Բացառութիւն կարելի է կատարել գերադաս վարչութեան եւ գերադաս ժողովի հաւանութեամբ:

**307. 95.-** Մասնաճիւղ մը քոյր մասնաճիւղի մը սահմանին մէջ որեւէ հասութաբեր ձեռնարկի համար պարտաւոր է

Շրջանային Վարչութեան եւ տեղական վարչութեան հաւանութիւնը առնել:

**307. 96.-** Վարչութիւնները Սիութենէն դուրս որեւէ ձեռնարկի չեն կրնար յատկացումներ ընել իրենց գանձէն: Բացառիկ պարագաներու գերադաս մարմինի հաւանութիւնը ստանալ անհրաժեշտ է:

**307. 97.-** Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն որեւէ փոխատուութիւն ընել ոեւէ անհատի (անդամ կամ ոչ), ինչպէս նաեւ որեւէ կազմակերպութեան: Այլ տեսակի փոխատուութիւններ կը կարօտին գերադաս վարչութիւններու հաւանութեան:

**307. 98.-** Վարչութիւնները փոխառութիւն կրնան ընել եւ կամ կալուածներ գրաւի տակ կրնան դնել միայն գերադաս մարմինի հաւանութեամբ:

## ՀԱՇՈՒԱԿԱՆ

**307. 99.-** Ամէն մարմին պարտաւոր է ստացած գումարին համար տալ համապատասխան կնքուած ընկալագիր՝ գանձապահին ստորագրութեամբ:

**307. 100.-** Բոլոր վարչութիւնները պարտաւոր են իրենց հաշիւները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահութեամբ:

**307. 101.-** Արգիլուած է որեւէ հիմնադրամ գործածել տարբեր նպատակի:

## ՄԱՐԶԱԿԱՆ

**307. 102.-** Մարզական խաղերը կ'ունենան իրենց յատուկ Ներքին Կանոնագրութիւնը, որ պէտք է վաւերացուած ըլլայ համապատասխան Վարչութեան կողմէ:

## ԳՈՅՔԵՐ ԵՒ ԿԱԼՈՒԲԾՆԵՐ

**307. 103.-** Իւրաքանչիւր Վարչութիւն պարտաւոր է ունենալ գոյքերու կանոնաւոր տոմար, ուր թուագրեալ նշանակւած պէտք է ըլլան մասնաճիւղի գոյքերը, համապատասխան մանրամասնութիւններով:

**307. 104.-** Իւրաքանչիւր շրջանի անշարժ կալուածները (դաշտ, մարգարան, ակունք, եւայլն), Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, պետութեան մօտ կ'արձանագրուին Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի անունով: Բացառիկ պարագաներու կը յանձնուին Կեդրոնական Վարչութեան կարգադրութեամբ:

**307. 105.-** Կալուածները կրնան ծախուիլ համապատասխան ժողովներու որոշումով եւ գերադաս Վարչութիւններու վաւերացումով:

**307. 106.-** Մասնաճիւղ մը լուծուելու պարագային՝ անշարժ եւ շարժուն կալուածները եւ իրաւունքները կը փոխանցուին համապատասխան գերադաս Վարչութեան:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

**307. 107.-** Հակակարգապահական արարքի մէջ կը նկատուի անդամ մը երբ.-

Ա. Կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր ժողովներու որոշումներուն դէմ կը մեղանչէ:

Բ. Շրջանային Վարչութեան կամ Մասնաճիւղի Վարչութեան որոշումներուն չ'ենթարկուիր:

Գ. Անդամատուրք չի վճարեր:

Դ. Ժողովներէ կը բացակայի:

Ե. Մարմիններու պաշտօնավարութեան շրջանին, անոնց դէմ պայքար կը մղէ:

Ձ. Հարցի մը, հակականոնագրային ձեռով ընթացք տալու համար, հանրագրութիւններ կը կազմէ:

Է. Գոյք կամ դրամ կ'իւրացնէ:

**Ծանօթ.**- Քննադատութիւնները թոյլատրելի են միայն իրաւասու ժողովներու մէջ:

**307. 108.**- Միութեան պատիժներն են.-

Ա. Նկատողութիւն, դիտողութիւն

Բ. Յանդիմանութիւն

Գ. Քուէարկելու իրաւունքէ զրկում

Դ. Ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէ զրկում

Ե. Կախակայում

Ձ. Հեռացում

Է. Արտաքսում:

**307. 109.**- Կարգապահական տեսակէտով ամէն անդամ պատասխանատու է այն Վարչութեան, որուն իրաւասութեանց դէմ յանցանք գործած է:

**307. 110.**- Մարմիններն ու ժողովները իրենց ենթակայ անդամներուն մասին կարգապահական պատիժներ տնօրինելու պարագային, պարտաւոր են պաշտպանուելու հնարաւորութիւն տալ ենթակային:

**307. 111.**- Պատժական ամէն որոշում կը տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**307. 112.**- Մարմիններու եւ ժողովներու պատժական որոշումները վերջնական են, եթէ բողոք չկայ անոնց դէմ: Բողոքէլ կարելի է անմիջականօրէն գերադաս Վարչութեան: Բողոքառու ժողովներու եւ մարմիններու որոշումները վերջնական են:

**Ծանօթ.**-

Ա. Դատավճիռի մը դէմ բողոքողը կը զրկուի իր դատը գերադաս ժողովին եւ կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն, եթէ իր բողոքը հրապարակուած է մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ:

Բ. Բողոքը գրաւոր կը ներկայացուի պատիժ որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:

Գ. Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ծայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**30Գ. 113.-** Կարգապահական պատիժներու դէմ բողոքել կարելի է մինչեւ երկու ամիս, հաշուելով որոշումը հաղորդուած թուականէն: Բողոքառու մարմինը կամ ժողովը հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեանի:

**30Գ. 114.-** Զ.Մ.Ը.Ս.էն հեռացման որոշում կը տրուի Շըրքանային Վարչութեան կողմէ, եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**30Գ. 115.-** Զ.Մ.Ը.Ս.էն արտաքսման որոշում կը տրուի եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**30Գ. 116.-** Ժողովներէ յաճախ բացակայող անդամ մը կը ստանայ նկատողութիւն, իսկ կրկնութեանց պարագային՝ յանդիմանութիւն:

**30Գ. 117.-** Սէկ տարի անդամատուրք չվճարող անդամ մը կը գրկուի ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէն: Յաջորդական երեք տարիներ անդամատուրք չվճարող անդամ մը դադրած կը նկատուի Միութեան շարքերէն:

**30Գ. 118.-** Կազմակերպական կանոններու դէմ մեղանշողները, վարչական կարգադրութեանց դէմ անասատողները, հակաօրինական կերպով քննադատողները, հանրագրութիւն կազմողները՝ մարմինին կամ ժողովներու կողմէ կը կախակայուին:

**Ծանօթ.-**

Ա. Կախակայուած անդամ մը ժամանակաւոր կերպով կը դադրի Միութեան անդամ ըլլալէ, չի կրնար մաս կազմել մարմինի մը եւ մասնակցիլ Ընդհանուր ժողովներու:

Բ. Կախակայունը առաւելագոյն մէկ տարուան շրջանի համար կ'ըլլայ:

Գ. Կախակայման շրջանը լրանալուն՝ ենթական կը վերստանայ Միութեան անդամի իր բոլոր իրաւունքները:

**30Դ. 119.-** Կախակայուած անդամներ գերօ չեն կացուց-  
ւիր իրենց նիւթական պարտաւորութիւններէն

**30Դ. 120.-** Միութեան գաղափարական ուղղութեան դէմ գործողները, կարգապահական յանցանքներու համար յա-  
ճախակի պատիժ ստացողները, Միութեան գոյքը եւ դրամը իւրացնողները Միութենէն կը հեռացուին, իսկ ծայրայեղ պարագաներու՝ կ'արտաքսուին:

**Ծանօթ.-** Զեռացուած անդամ մը հեռացման թուականէն երկու տարի յետոյ կրնայ գրաւոր դիմում կատարել զինք հեռացնող մարմինին կամ ժողովին: Վերընդունման իրաւունքը կը պատկանի հեռացման որոշումը տնօրինող մարմինին կամ ժողովին:





# ՍԿԱՌԻՏԱԿԱՆ



# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱՆՈՒՆ

**Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտությունը անբաժան մասն է Միության ընդհանուր կառույցին եւ անոր անդամները կը կոչուին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ:**

Ծանօթ.- Այս կանոնագրին մէջ ՄԿԱՈՒՏ բառը կը վերաբերի հաւասարապէս փոքր եւ աղջկանց բաժիններուն:

## ՆՊԱՏԱԿ

**Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան նպատակն է.-**

**Ա. Պատրաստել ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու փէր, հաւատարմութեամբ եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներու իրագործումին:**

**Բ. Պատրաստել առողջ, չարքաշ ու արի անհատներ:**

**Գ. Զօրացնել իրենց մտային կարողութիւնները:**

**Դ. Զարգացնել իրենց մէջ պարզականութեան, պատասխանատւութեան եւ պատուի զգացումները, ինչպէս նաեւ՝ վեհանձնութեան եւ զոհողութեան ոգին:**

**Ե. Արթնցնել համագործակցութեան, ծառայասիրութեան, ընկերասիրութեան ոգին, պատրաստելով փիպար քաղաքացիներ:**

## ՄԻՋՈՑՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմէ սկաուրական խումբեր հայրենիքի եւ գաղութներու մէջ՝ իրագործելու համար իր սկաուրութեան նպատակները:

- Սկաուրներու ազգային, քաղաքացիական, ընկերային, սկաուրական դաստիարակութեան եւ որակաւոր ու կարող աստիճանաւորներու պատրաստութեան համար կը կազմակերպուին դասախօսութիւններ, դպրոց-բանակումներ, դասընթացքներ, արշաւներ, բանակումներ եւ համագումարներ:

- Ծանօթացնելու համար սկաուրութիւնը եւ փարածելու համար անոր նպատակները.-

Ա. Կը կազմակերպուին ծնողական հանդիպումներ, հրապարակային դասախօսութիւններ եւ ձեռնարկներ:

Բ. Կը հրապարակուին գիրքեր եւ յօդուածներ՝ մամուլով:

Գ. Յարուկ աշխատանք կը փարուի սկաուրութիւնը ծանօթացնելու հայ աշակերպութեան:



# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր





## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

**30Գ. 121.-** Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան կրնայ անդամակցիլ անէն հայ անհատ՝ մասնակցելով իր սեռին եւ տարիքին համապատասխան բաժանմունքին:

**30Գ. 122.-** Թեկնածուն սկաուտական կազմին անդամ կը դառնայ մասնաճիւղի Վարչութեան համաձայնութեամբ կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին հաստատունով:

**30Գ. 123.-** Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմի իւրաքանչիւր անդամ կը վճարէ անդամավճար, որ կը ճշդուի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կողմէ եւ կը հաստատուի Վարչութեան որոշումով:

**30Գ. 124.-** Անդամակցիլ փափաքողը պէտք է ներկայացընէ գրաւոր դիմումնագիր մը, իր բնական վայրի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին: 18 տարեկանէն փոքր անհատները պէտք է ունենան ծնողքին հաւանութիւնը հաստատող դիմումնագիր մը, իսկ 18 տարեկան եւ աւելի վեր տարիք ունեցող անհատները պարտին ունենալ երկու երաշխաւորներ:

### Ծանօթ.-

ա) Յիշեալ երաշխաւորները պէտք է նուազագոյնը երկու տարուան Հ.Մ.Ը.Մ.ական եղած ըլլան եւ ամբողջացուցած՝ 18 տարիքը:

բ) Փորձառական ժամանակաշրջանէ մը ետք, նորագիրը կը կատարէ իր խոստումը կամ երդումը, այնուհետեւ դառնալով անդամ այդ մասնաճիւղին:

գ) Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմի անդամը չի կրնար մաս կազմել այլ սկաուտական խումբերու:

**30Գ. 125.-** Խոստում կամ երդում կատարած նորագիրին կը տրուի անդամատետր՝ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդին կնիքով եւ ստորագրութեամբ:

## ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ

**307. 126.-** Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ երեք բաժանմունքները.-

Մանչերու յատուկ

**1. Գայլիկ**

**2. Արի**

**3. Երէց**

Աղջիկներու յատուկ

**1. Արծուիկ**

**2. Արեւոյշ**

**3. Պարմանուհի**

**Ծանօթ.-** ա) Այս բաժանմունքները կը կատարուին հիմք ունենալով տարիքը: Գայլիկ, արի, արծուիկ եւ արեւոյշ բաժանմունքները կարելի է ենթաբաժանումներու ենթարկել՝ տարեկիցները համախմբելով:

բ) Այս բաժանմունքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական սկաուտական տարիքային դասաւորումներուն:

գ) Ըստ շրջաններու յարմարութեան, կրտսեր գայլիկներն ու արծուիկները (3էն 6 տարեկան) կարելի է համախմբել նոյն խմբաւորումով՝ «Մոկլի» անունով: Մոկլիներու գործունէութիւնը ճշդելի է Ներքին Կանոնագրութեամբ:

**307. 127.-** Սկաուտը, որ չի փափաքիր շարունակել սկաուտութիւնը, Վարչութեան հաստատումով կը փոխանցուի մասնաճիւղի անդամական ոչ-տարազաւոր շարքերուն:

**307. 128.-** 18 տարիքը ամբողջացուցած սկաուտը կըրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, Կանոնագրով ճշդուած բոլոր իրաւունքներով:

**Ծանօթ.-** 16-18 տարեկան սկաուտը կըրնայ մասնակցիլ մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին որպէս ունկնդիր:

## ԿԱՐԳԵՐ

**307. 129.-** Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտութիւնը ունի հետեւեալ կարգերը, որոնք դաստիարակչական աշխատանքի հանգըր-լաններ են՝ հիմնուած սկաուտներու աստիճանաբար զար-գացող մարմնային եւ մտային կարողութեանց վրայ.-

ա) Գայլիկներ կամ Արծուիկներ

1.- Կակուղ Թաթիկ

2.- Միասող

3.- Երկասող

բ) Արիներ կամ Արենոյշներ

1.- Նորագիր

2.- Նորընծայ

3.- Երկրորդ կարգ - (Բ. կարգ)

4.- Առաջին կարգ - (Ա. կարգ)

5.- Վկայեալ կարգ

գ) Երէցներ եւ Պարմանուհիներ

1.- Նախապատրաստական շրջան

2.- Մարզումի շրջան

3.- Ընդհանուր ծառայութեան շրջան

4.- Վկայեալ կարգ

5.- Արարատեան կարգ

դ) Խմբապետներ եւ Խմբապետուհիներ

1.- Արարատեան կարգ

**Ծանօթ 1.-** Սկաուտական բոլոր կարգերն ու գիտելիքները կարելի է պատշաճեցնել երկրի տեղական պայմաններուն, բացի Արարատեան կարգէն, որուն նախապայմանները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը եւ առ ի՛ գործադրութիւն կը յղէ զանոնք շրջաններուն:

Արարատեան կարգի պայմանները ամբողջացուցած անհատին անունը Շրջանային Վարչութեան կողմէ կը յղուի Կեդրոնական Վարչու-թեան համապատասխան կարգը ստանալու համար:

**Ծանօթ 2.-** Սկաուտական շարքերու բոլոր անդամները կրնան WOOD BADGEի մասնագիտական քննութիւն անցընել իրենց բնակած երկրի ֆետերասիօնի կողմէ ճշդուած պայմաններով:

## **ԽՈՍՏՈՒՄ, ԵՐԴՈՒՄ, ԴԱԲԱՆԱՆՔ, ՆՇԱՆԱԲԱՆ, ՆՇԱՆԱԿ**

**ՅՕԴ. 130.-** Կակուղ Թաթիկի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած գայլիկը կամ արծուիկը կը կատարէ հետեւեալ խոստումը.-

**«Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ ըլլալու Աստուծոյ, Հայրենիքիս, ծնողքիս եւ վոհմակի (երամի) օրէնքին: Գործել բարիք մը ամէն օր»:**

Վոհմակի օրէնքն է.-

- 1.- Գայլիկը մտիկ կ'ընէ Ծեր Գայլը:**
- 2.- Գայլիկը ինքզինքը մտիկ չ'ըներ:**
- 3.- Գայլիկը մաքուր հայերէն կը խօսի:**

Երամի օրէնքն է.-

- 1.- Արծուիկը մտիկ կ'ընէ Արծիւը:**
- 2.- Արծուիկը ինքզինք մտիկ չ'ըներ**
- 3.- Արծուիկը մաքուր հայերէն կը խօսի:**

**ՅՕԴ. 131.-** Նորագիրի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած արին կամ արեւոյշը կը կատարէ հետեւեալ խոստումը.-

Յ.Մ.Ը.Մ.ի արիին խոստումը.-

**« Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու Հայրենիքիս:**

**- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ:**

**- Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի արիներու դաւանանքին»:**

Հ.Մ.Ը.Մ.ի արենոյշին խոստումը.-

**«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Ազգիս ու Հայրենիքիս:**

- Միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ:

- Հնազանդիլ Հ.Մ.Ը.Մ.ի արենոյշներու դաւանանքին»:

Հ.Մ.Ը.Մ.ի արիներու եւ արենոյշներու դաւանանքն է.-

1.- Արիին-Արենոյշին խօսքը նուիրական է:

2.- Արիին-Արենոյշը հնազանդ է:

3.- Արիին-Արենոյշը հաւատարիմ եւ ուղղամիտ է:

4.- Արիին-Արենոյշը միշտ կ'օգնէ ուրիշին:

5.- Արիին-Արենոյշը բարեկամ է բոլորին եւ եղբայր (քոյր) ուրիշ սկաուտի՝ առանց ընկերային կարգի խըտրութեան:

6.- Արիին-Արենոյշը բարեկիրթ է:

7.- Արիին-Արենոյշը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ:

8.- Արիին- Արենոյշը անասուններ եւ բոյսեր կը սիրէ եւ կը պաշտպանէ:

9.- Արիին-Արենոյշը միշտ զուարթ եւ խանդավառ է:

10.- Արիին-Արենոյշը աշխատասէր եւ կորովի է:

11.- Արիին-Արենոյշը տնտեսող է:

12.- Արիին-Արենոյշը մաքուր է մտածումով, խօսքով եւ գործով:

**ՅՕԴ. 132.-** Նախապատրաստական շրջանի գիտելիքները յաջողութեամբ իւրացուցած երէցը կամ պարմանուհին կը կատարէ հետեւեալ երդումը.-

**«Կ'երդնում պատուոյս վրայ**

- Հաւատարիմ մնալ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրին եւ սկաուտութեան սկզբունքներուն ու օրէնքներուն:

- Ծառայել Ազգիս, Հայրենիքիս եւ աշխատիլ հայ ժողովուրդի իրաւունքներուն իրագործման:

- Պայքարիլ այլասերման եւ ապազգայնացման դէմ՝ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը»:

**ՅՕԴ. 133.-** Միջազգային սկաուտութեան նշանաբանն է. «Միշտ Պատրաստ»: Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանն է. «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր»: Գայլիկինը եւ արծուիկինը՝ «Լաւագո՛յն», արիիկինը եւ արեւոյշիկինը՝ «Միշտ Պատրաստ», երէցիկինը եւ պարմանուհիիկինը՝ «Ծառայո՛ղ»:

**ՅՕԴ. 134.-** Խոստում կամ երդում կատարած Հ.Մ.Ը.Մ.ի արին, արեւոյշը, երէցը կամ պարմանուհիին իր գլխարկին վրայ կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը եւ տարագին վրայ՝ սկաուտական շուշանածաղիկը:



Հ.Մ.Ը.Մ.ի ծուշանածաղիկը



Հ.Մ.Ը.Մ.ի Նշանակը

**ՅՕԴ. 135.-** Նորագիրը խոստում կամ երդում կատարելէ ետք, իրաւունք կը ստանայ իր տարագին հետ կրելու փողկապ եւ գլխարկ ու մասնակցելու սկաուտական պաշտօնական արարողութիւններուն:

## ԴՐՕՇԱԿՆԵՐ

**ՅՕԴ. 136.-** Իւրաքանչիւր մասնաճիւղի սկաուտական կազմը կ'ունենայ իր դրօշակը՝ նման Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական դրօշին, 120 սմ. x 90 սմ. մեծութեամբ, մասնաճիւղին գոյնով, որ կը ճշդուի Շրջանային Վարչութեան կողմէ: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը հայերէնով եւ բնականօրէն՝ երկրին լեզուով:

**ՅՕԴ. 137.-** Սկաուտական իւրաքանչիւր բաժանմունք կ'ունենայ իր դրօշակը՝ 90 սմ. x 67 սմ. մեծութեամբ, մասնա-

ծիւղին գոյնով: Դրօշակին վրայ կը գրուի մասնաճիւղին անունը եւ բաժանմունքին թիւը կամ անունը հայերէնով եւ բնականօրէն երկրին լեզուով:

## **ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ**

**ՅՕԴ. 138.-** Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ վարչական բաժանումները.-

### **Ա.- ՄԱՐՄԻՆՆԵՐ**

- ա) Շրջանային Սկաուտական Խորհուրդ
- բ) Մեկուսի Շրջանի Սկաուտական Խորհուրդ
- գ) Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ:

### **Բ.- ԺՈՂՈՎՆԵՐ**

- ա) Համա-Հ.Ս.Ը.Մ.ական Խմբապետական Համագումար
- բ) Մասնաճիւղերու Խմբապետներու Ընդհանուր Ժողով:

## **ՄԱՐՄԻՆՆԵՐ**

### **ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

#### **ԿԱԶՄ**

**ՅՕԴ. 139.-** Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը նշանակուի Հ.Ս.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանի տեւողութեան:

**ՅՕԴ. 140.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը բաղկանայ սկաուտական գործերու լաւատեղեակ 5-7-9-11 Հ.Ս.Ը.Մ.ականներէ: Այս թիւին մաս կը կազմեն Շրջանային Ընդհանուր Խմբապետը կամ Խմբապետուհին, Շրջանային Խմբապետը եւ Շրջանային Խմբապետուհին:

**307. 141.-** Շրջանային սկաուտական խորհուրդը կը կազմէ իր դիւանը (Տարագաւորը մաս չի կազմեր դիւանին):

**307. 142.-** Շրջանային Վարչութեան սկաուտական ներկայացուցիչը ի պաշտօնէ կը մասնակցի Շրջանային սկաուտական խորհուրդի ժողովներուն:

**307. 143.-** Շրջանային սկաուտական խորհուրդի անդամներուն թիւը եւ նստավայրը կը ճշդէ Շրջանային Վարչութիւնը:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**307. 144.-** Շրջանային սկաուտական խորհուրդը կը պատրաստէ իր գործունէութեան ծրագիրը, զոր կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:

**307. 145.-** Շրջանային սկաուտական խորհուրդը կը վարէ շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքները, կը հսկէ շրջանի սկաուտական գործունէութիւններուն, համաձայն սկաուտական Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ժողովի որոշումներուն:

**307. 146.-** Շրջանային սկաուտական խորհուրդը կը գումարէ հերթական ժողովներ: Նիստերու վաւերացուած ատենագրութիւններու պատճէնը կը փոխանցէ Շրջանային Վարչութեան:

**307. 147.-** Շրջանային սկաուտական խորհուրդը կրնայ իրատարակել սկաուտական թերթ, կամ սկաուտական գիրքեր, Շրջանային Վարչութեան հաւանութեամբ եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ:

#### ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

**307. 148.-** Շրջանային սկաուտական խորհուրդէն ներ-

կայացուցիչ մը խորհրդակցական ձայնով կը մասնակցի Զ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին:

**30Դ. 149.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը մասնաճիւղերու Վարչութիւններուն հետ իր թղթակցութիւնները կը կատարէ Շրջանային Վարչութեան միջոցաւ:

#### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

**30Դ. 150.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը ի պահանջեալ հարկին կը գործէ իր գտնուած երկրի սկաուտական կանոնագրութեան տրամադրութեանց համաձայն:

**30Դ. 151.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը երկրէն դուրս բանակում, արշաւ, շրջապտոյտ, դասընթացք կազմակերպելու պարագային, պարտի Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան արտօնութիւնը առնել, գործնական քայլերու դիմելէ առաջ: Ապա ձեռնարկի աւարտին պարտի գրաւոր տեղեկագիր (բարոյական եւ նիւթական) ներկայացնել Շրջանային Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան:

**30Դ. 152.-** Շրջանային Սկաուտական Խորհուրդը իր հաշիւները կը պահէ կանոնաւոր եւ օրինաւոր հաշուական տոմարներով:

Իր գործունէութեան աւարտին նիւթաբարոյական տեղեկագիրը կը ներկայացնէ Շրջանային Վարչութեան:

**30Դ. 153.-** Շրջանային Ներկայացուցչական Ժողովը կը ճշդէ Շրջանային Սկաուտական Խորհուրդի նիւթական պիւտճէն, զոր կը հայթայթէ Շրջանային Վարչութիւնը:

**30Դ. 154.-** Շրջանային Վարչութենէն Շրջանային Սկաուտական Խորհուրդ նիւթական փոխանցումները կը կատարւին Շրջանային Սկաուտական Խորհուրդի ներկայացուցած նախահաշիւներու հիման վրայ, իւրաքանչիւր գլուխի համար առանձին:

## ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**307. 155.-** Մեկուսի Շրջանի Սկաուտական Խորհուրդի կազմը, պարտականությունը, պարտաւորությունն ու իրաւասութիւնը կը նոյնանայ Շրջանային Սկաուտական Խորհուրդին սահմանուած յօդուածներու հասկացողութեամբ:

**Ծանօթ.-** Այս կանոնագրութեամբ՝ այն բոլոր յօդուածներուն մէջ, ուր արձանագրուած է Շրջանային Սկաուտական Խորհուրդի անունը կը համապատասխանէ նաեւ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Խորհուրդներուն:

## ՄԱՍՆԱԾԻՂԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**307. 156.-** Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի նշանակել Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ, որուն կազմը, պարտականութիւնը, պարտաւորութիւնն ու իրաւասութիւնը կը ճշդուին իր շրջանի Ներքին Կանոնագրութեամբ:

## ԺՈՂՈՎՆԵՐ

### ՀԱՄԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

**307. 157.-** Համա-Յ.Մ.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարը կը կայանայ նուազագոյնը չորս տարին անգամ մը, զայն կը կազմակերպէ եւ կը հովանաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

**307. 158.-** Համա-Յ.Մ.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարին կը մասնակցին Շրջանային Ընդհանուր Խմբապետները/Խմբապետուհիները եւ Շրջանային Խմբապետներն ու Խմբապետուհիները, որոնց չզոյութեան պարագային՝ Շրջանի բարձրագոյն պաշտօն ունեցող Խմբապետը եւ Խմբապետուհին: Մեկուսի շրջաններու պարագային՝ կը մասնակցին աղջկանց եւ տղոց բարձրագոյն պաշտօն ունեցող ներկայացուցիչները:

**Ծանոթ.**- Ի պահանջեալ հարկին Կեդրոնական Վարչութիւնը կը հրապիրտ անցեալի վաստակաւոր խմբապետ/ուհիներ:

**307. 159.-** Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարը.-

ա) Կը լսէ իւրաքանչիւր Շրջանի սկաուտական գործունէութեան մասին ամփոփ տեղեկագիր՝ առ ի տեղեկութիւն:

բ) Կ'ուսումնասիրէ տեղեկագրերու լոյսին տակ՝ Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու սկաուտական մասնագիտական հարցերը եւ կը թելադրէ գործունէութեան ուղեգիծ:

գ) Կը զբաղի սկաուտական մասնագիտական հարցերով, ազգային դաստիարակչական գիտելիքներով, գործնական աշխատանքներով, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու ծրագրումով, եւայլն:

դ) Կը մշակէ սկաուտական ընդհանուր գործունէութեան ուղեգիծ:

ե) Կրնայ, Սկաուտական Ընդհանուր Կանոնագրին կապակցութեամբ, բարեփոխութեան առաջարկներ բանաձեւել:

զ) Իր եզրակացութիւնները, առաջարկներն ու թելադրանքները կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան:

**307. 160.-** Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարը չի կրնար զբաղիլ Միութեան վարչական, կազմակերպական եւ կանոնագրային հարցերով:

## **ՄԱՍՆԱԾԻՒՆԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**307. 161.-** Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր Ժողովը կը բաղկանայ Շրջանային Ընդհանուր խմբապետէն կամ խմբապետուհիէն, Շրջանային խմբապետէն ու խմբապետուհիէն եւ մասնաճիւղերու խմբապետներէն կամ խմբապետուհիներէն:

ա) Հարկ եղած պարագային կը հրաւիրուին շրջանի գործօն խմբապետներ եւ խմբապետուհիներ:

բ) Շրջանային սկաուտական խորհուրդի անդամները կրնան մասնակցիլ այս ժողովին:

գ) Ժողովը կը պահէ ատենագրութիւն եւ զայն կը փոխանցէ Շրջանային սկաուտական խորհուրդին:

**30Դ. 162.-** Մասնաճիւղերու խմբապետներու Ընդհանուր ժողովը.-

ա) Կը լսէ մասնաճիւղերու գրաւոր ամփոփ զեկոյցները՝ սկաուտական գործունէութեան մասին:

բ) Կը քննէ սկաուտական մասնագիտական հարցեր եւ կը գտնէ համապատասխան լուծումներ՝ ջանալով բարելաւել մասնաճիւղերու գործունէութեան կարելիութիւնները:

## ՊԱՇՏՕՆՆԵՐ

**30Դ. 163.-** Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական շարքերը ունին իրենց յատուկ սկաուտական հետեւեալ պաշտօնները.-

- 1.- Շրջանային Ընդհանուր խմբապետ/խմբապետուհի.
- 2.- Շրջանային խմբապետ եւ խմբապետուհի.
- 3.- Մասնաճիւղի խմբապետ/խմբապետուհի.
- 4.- Միաւորի խմբապետ եւ խմբապետուհի:

**30Դ. 164.-** Վերոյիշեալ պաշտօններու (թիւ 1 եւ 2) գործունէութեանց ժամանակաշրջանը ճշդուած է սոյն կանոնագրութեամբ, իսկ թիւ 3 եւ 4 պաշտօններու ժամանակաշրջանը հարկ է ճշդել Ներքին Կանոնագրութիւններու մէջ:

**30Դ. 165.-** Պաշտօն մը պէտք է վաւերացուած ըլլայ սկաուտական եւ Վարչական համապատասխան մարմիններու կողմէ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒԻՅ

**30Դ. 166.-** Շրջանի մը սկաուտութեան ընդհանուր պետն է:

ա) Շրջանէն ներս այս պաշտօնը կը հաստատուի երբ շրջանը ունենայ նուազագոյնը 500 սկաուտ եւ երկու մասնաճիւղ:

բ) Այն շրջանը որ չունի Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուհի, չի կրնար Շրջանային Ընդհանուր Խմբապետ/Խմբապետուհի ունենալ:

գ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ: Կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

դ) Կրնայ երկրորդ անգամ վերանշանակուիլ:

ե) Կրնայ մէկ շրջան դադարէ ետք վերանշանակուիլ, պայմանով որ չդադրեցնէ իր միութեանական գործունէութիւնը:

### ՊԱՅՄԱՆՆԵՐ

**307. 167.-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին պարտի նախապէս երկու տարի Շրջանային Խըմբապետի/Խմբապետուհիի պաշտօն վարած ըլլալ:

**Ծանօթ.-** Նախընտրաբար ունենալ Արարատեան Կարգ եւ Wood Badge:

### ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱԲԱՍՈՒԹԻՒՆ

**307. 168.-** Շրջանային Ընդհանուր Խմբապետը/Խմբապետուհին.-

ա) Կը հսկէ իր շրջանի սկաուտական ընդհանուր աշխատանքներուն:

բ) Կը մշակէ Շրջանային Խմբապետներու գործակցութեամբ՝ իր շրջանի սկաուտական շարժումին ընդհանուր ուղեգիծը:

գ) Կը վարէ մասնաճիւղերու Խմբապետներու ընդհանուր ժողովը:

դ) Կը վարէ սկաուտական ընդհանուր հանդիսութիւնները:

ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ծայնով:

զ) Կը մասնակցի Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Խմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:

է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

## **ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

**307. 169.-** ա) Շրջանային խմբապետը գայլիկներու, արիներու եւ երեցներու պատասխանատու խմբապետն է, իսկ Շրջանային խմբապետուհին՝ արծուիկներու, արենոյշներու եւ պարմանուհիներու:

բ) Կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ եւ կը գործէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

## **ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**(Տես՝ շրջանի Սկաուտական Ներքին Կանոնագիրը):**

## **ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

**307. 170.-** Շրջանային խմբապետը կամ Շրջանային խմբապետուհին.-

ա) Կը հսկէ մասնչերու կամ աղջկանց բաժնի գործունէութիւններուն վրայ:

բ) Կը յանձնէ բոլոր մասնաճիւղերէն ներս իր բաժնի համապատասխան խմբապետներու աստիճաններն ու պաշտօնները:

գ) Կը վարէ իր թեւին յատուկ՝ ընդհանուր հանդիսութիւնները:

դ) Կը մասնակցի Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Համագումարին՝ ի պաշտօնէ:

ե) Կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ժողովին՝ իրաւասու ձայնով:

զ) Կը մասնակցի Մասնաճիւղերու խմբապետական Ընդհանուր ժողովին՝ ի պաշտօնէ:

է) Կը մասնակցի Շրջանային Ներկայացուցչական ժողովին՝ խորհրդակցական ձայնով:

## **ՄԱՍՆԱԾԻՂԻ ԽՄԲԱՊԵՏ/ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

**307. 171.-** Մասնաճիւղի մը սկաուտական բաժնի ընդհանուր պատասխանատուն է:

**307. 172.-** Մասնաճիւղի Խմբապետ/Խմբապետուհին կը նշանակուի մասնաճիւղի Վարչութեան կողմէ՝ համախորհուրդ Շրջանային Սկաուտական Խորհուրդին:

**307. 173.-** Կը գործէ մասնաճիւղի Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանին:

**307. 174.-** Մասնաճիւղի Խմբապետին նշանակումի պայմանները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին շրջաններու կամ Մեկուսի շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

## **ՄԻԱԻՈՐԻ ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒՅԻ**

**307. 175.-** Մասնաճիւղի սկաուտական միաւորները կ'ունենան Միաւորի Խմբապետ եւ Խմբապետուհի, որուն նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները կը ճշդուին Շրջաններու կամ Մեկուսի Շրջաններու Սկաուտական Ներքին Կանոնագրութեամբ:

## **ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐԱԿԱՆ ԿԱԶՄ**

**307. 176.-** Սկաուտական շարքերը կ'ունենան հետեւեալ աստիճանաւորական կազմերը, որոնք իրենց կարողութեան եւ փորձառութեանց համաձայն բաժնուած են զանազան աստիճաններու:

**307. 177.-** Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտութիւնը ունի հետեւեալ աստիճանները.-

<b>ԱՐԾՈՒԿ</b>	<b>ԱՐԵՆՈՅՇ</b>	<b>ՊԱՐՄԱՆՈՒՅՐ</b>
Երամի Պետ	Խմբապետուհի	Խմբապետուհի
Երամի Փոխ-Պետ	Փոխ-խմբապետուհի	Փոխ- Խմբապետուհի
Վարիչ Վեցեակապետուհի	Վարիչ Առաջնորդուհի	
Վեցեակապետուհի	Առաջնորդուհի	Տասնապետուհի
Փոխ-Վեցեակապետուհի	Փոխ-Առաջնորդուհի	Փոխ-Տասնապետուհի
<b>ԳԱՅԼԻԿ</b>	<b>ԱՐԻ</b>	<b>ԵՐԷՑ</b>
Վոհմակի Պետ	Խմբապետ	Խմբապետ
Վոհմակի Փոխ-Պետ	Փոխ-խմբապետ	Փոխ-խմբապետ
Վարիչ Վեցեակապետ	Վարիչ Առաջնորդ	
Վեցեակապետ	Առաջնորդ	Տասնապետ
Փոխ-Վեցեակապետ	Փոխ-Առաջնորդ	Փոխ-Տասնապետ

**307. 178.-** Յօդուած 177ով ճշդուած աստիճանաւորական կազմին նշանակումի պայմանները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները, իրաւասութիւնները եւ մարմիններու հետ յարաբերութիւնը իւրաքանչիւր շրջան կը տնօրինէ իր երկրի սկաուտական կանոններուն համաձայն: Այդ բոլորը պէտք է ամփոփուած ըլլան շրջանի Սկաուտական Ներքին Կանոնագրին մէջ:

**307. 179.-** Սկաուտական աստիճանները մնայուն հանգամանք ունին:

**307. 180.-** Աստիճանը տիտղոս մըն է միայն եւ ենթակային իրաւական պատասխանատուութիւն չի տար:

**307. 181.-** Աստիճանաւոր մը իր պատասխանատուութիւնները կը ստանայ այն ատեն միայն, երբ կ'ունենայ նաեւ համապատասխան պաշտօն:

**307. 182.-** Սկաուտ աստիճանաւորը կը գործադրէ իրմէ գերադաս գործօն աստիճանաւորին կամ պաշտօնի վրայ եղող սկաուտ պատասխանատուին հրահանգները:

**307. 183.-** Ժողովական որոշումները սկաուտական շարքերուն կը հասնին նուիրապետական կարգով:

## **ՇԱՐՔԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

**307. 184.-** Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը կը բաղկանայ խումբերէ, որոնց կառոյցը հետեւեալն է.-

Սկաուտական բաժանմունքներն են.-

- Գայլկական վոհմակ - Արծուիկներու երամ
- Արիներու խումբ - Արեւոյշներու խումբ
- Երէցական փաղանգ - Պարմանուիիներու փաղանգ

### ***Ա.- Պայլիկներու բաժանմունք***

- 1.- Պայլիկները կը կազմեն վոհմակը:
- 2.- Վոհմակը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
- 3.- Վեց գայլիկներ կը կազմեն վեցեակը:
- 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետ եւ վեցեակապետ մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունէութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետ:
- 6.- Վոհմակը կ'ունենայ վոհմակի պետ (ուսուցումի պատասխանատու) եւ վոհմակի երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու):
- 7.- Վոհմակը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
- 8.- Վոհմակը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

### ***Բ.- Արծուիկներու բաժանմունք***

- 1.- Արծուիկները կը կազմեն երամը:
- 2.- Երամը կը բաղկանայ չորս վեցեակներէ:
- 3.- Վեց արծուիկներ կը կազմեն վեցեակը:
- 4.- Իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ փոխ-վեցեակապետուհի եւ վեցեակապետուհի մը: Անոնք կը վարեն վեցեակի գործունէութիւնը:
- 5.- Երկու վեցեակներ կ'ունենան մէկ վարիչ վեցեակապետուհի:
- 6.- Երամը կ'ունենայ երամի պետ (ուսուցումի պատասխանատու) եւ երկու փոխ-պետեր (խաղերու եւ գործնական աշխատանքներու պատասխանատու):
- 7.- Երամը կ'ունենայ առաւելագոյնը 35 անդամ:
- 8.- Երամը կը բնորոշուի թիւով, իսկ վեցեակը՝ գոյնով:

### ***Գ.- Արիներու կամ Արենոյշներու բաժանմունք***

- 1.- Արիները կամ արենոյշները կը կազմեն խումբը:
- 2.- Խումբը կը բաղկանայ չորս խմբակներէ:
- 3.- Առաւելագոյնը 8 արիներ կամ արենոյշներ կը կազմեն խմբակը:

4.- Առաջնորդ/Առաջնորդուհի մը եւ փոխ-առաջնորդ/-առաջնորդուհի մը կը վարեն խմբակը:

5.- Երկու խմբակներ կ'ունենան վարիչ առաջնորդ/առաջնորդուհի մը:

6.- Խումբը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի եւ խմբապետ/խմբապետուհի մը:

7.- Խումբը կ'ունենայ առաւելագոյնը 45 անդամ:

8.- Խումբը կը զատորոշուի թիւով, իսկ խմբակը՝ կենդանիի անունով:

### **Դ.- Երէցներու կամ Պարմանուհիներու բաժանմունք**

1.- Երէցները կամ պարմանուհիները կը կազմեն փաղանգը:

2.- Տասը երէցներ կամ պարմանուհիներ կը կազմեն տասնեակը:

3.- Տասնեակը կը վարեն փոխ-տասնապետ/փոխ-տասնապետուհի եւ տասնապետ/տասնապետուհի մը:

4.- Փաղանգը կ'ունենայ առաւելագոյնը 30 անդամ:

5.- Փաղանգը կ'ունենայ փոխ-խմբապետ/փոխ-խմբապետուհի մը եւ խմբապետ/խմբապետուհի մը:

6.- Փաղանգը եւ տասնեակը՝ կ'ունենան պատմական անուն:

**Ծանօթ.**- Վերոյիշեալ դասաւորումները ընդհանուր բնոյթ ունին: Իւրաքանչիւր շրջան կը պատշաճի իր երկրի կանոններուն՝ մեկնաբանած շրջանի Ներքին Կանոնագրով:

**30Դ. 185.-** Յօդուած 184ով սահմանուած կառոյցը կը կազմէ սկաուտական միաւորը:

**30Դ. 186.-** Նոր միաւոր մը կարելի է կազմել երկու ձեւով.-

ա) Երկու կամ երեք սկաուտական բաժանմունքներէ (օրինակ՝ վոհմակ, խումբ, փաղանգ):

բ) Նոյն բաժանմունքէն նուազագոյնը երկու կազմերէ (օրինակ՝ գայլիկական երկու վոհմակ):

**307. 187.-** Հ.Մ.Ը.Մ.ի անունով սկաուտական բաժանմունքներ կազմելու համար հարկ է ունենալ մասնաճիւղի Վարչութեան կամ անոր նշանակած Սկաուտական Խորհուրդի արտօնութիւնը եւ ենթակայ ըլլալ անոր որոշումներուն:

## **ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ-ՊԱՏԺԱԿԱՆ**

*(Տեսնել նաեւ Միութեան Ընդհանուր Ծրագիր Կանոնագրի 30դ. 107 էն 120, էջ 30-33)*

**307. 188.-** Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին եւ ոգիին, սկաուտական սկզբունքներուն եւ Ծրագիր-Կանոնագրին դէմ գործող սկաուտական շարքերու իւրաքանչիւր անդամ կ'ենթարկուի իր գործած յանցանքին համապատասխան պատիժի:

**307. 189.-** Կարգապահական տեսակէտով, սկաուտական շարքերու ամէն անդամ պատասխանատու է այն մարմինին կամ ժողովին, որուն իրաւասութեան դէմ յանցանք գործած է:

**307. 190.-** Պատժական ամէն որոշում պէտք է առնուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**Ծանօթ.-** ա) Բացի սկաուտական պատիժներու առաջին երեք կէտերէն (տես 30դ. 198, էջ 61), որոնք կրնան տրուիլ նաեւ խումբի պատասխանատուին կողմէ (դիտողութիւն, յանդիմանութիւն, խումբի գործունէութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում):

բ) Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**307. 191.-** Կարգապահական պատիժներու դէմ կարելի է բողոքել.-

ա) Պատժական որոշումի հաղորդումէն մինչեւ 2 ամիս:

բ) Պատժական որոշումը տուած մարմինին անմիջականօրէն գերադաս մարմինին:

**307. 192.-** Դատավճիռի մը դէմ մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ բողոքողը կը գրկուի իր դատը գերադաս ժողովին կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն:

**307. 193.-** Դատավճիռի մը դէմ բողոքը կը ներկայացուի պատիժը որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:

**307. 194.-** Բողոքառու մարմինը կամ ժողովը.-

ա) Զարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեանի մը:

բ) Պարտաւոր է լսել պատիժը սահմանած մարմինը եւ պատժուած անդամը:

գ) Անոր որոշումները վերջնական են:

**307. 195.-** Բոլոր պատիժները ենթակային կը հաղորդուին գրաւոր եւ նուիրապետական կարգով:

**307. 196.-** Սկաուտական շարքերու աստիճանաւորը կը դատուի իր պաշտօնը վաւերացուցած մարմինին կամ ժողովին կողմէ:

**307. 197.-** Զ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի երկու ձեւի պատիժներ.-

**Ա.- Սկաուտական**

**Բ.- Միութենական**

**307. 198.-** Սկաուտական պատիժներն են.-

1) Դիտողութիւն (բերանացի կամ գրաւոր):

2) Յանդիմանութիւն (բերանացի կամ գրաւոր):

3) Խումբի գործունէութեան օգտակար եղող աշխատանքներու յաւելեալ կատարում (ջուր կրել, փայտ հաւաքել, բանակատեղին եւ սկաուտական սենեակը մաքրել ու նման այլազան աշխատանքներ, որոնք կրնան օգտակար ըլլալ խումբի գործունէութեան):

**Ծանօթ.-** Այս պատիժները (1-3) կը տնօրինուին պատասխանատու աստիճանաւորին կամ մարմինին կողմէ:

4) **Կախակայում սկաուտական աշխատանքներէ.** Սկաուտը կը գրկուի սկաուտական աշխատանքներուն մասնակցելէ, բայց կը կատարէ իրեն տրուած բոլոր պարտականութիւնները: Այս պատիժը կը տրուի առաւելագոյնը չորս շաբթուան համար:

5) **Փողկապ կրելու իրաւունքէն զրկում.** Կախակայւած սկաուտը երբ կը կրկնէ իր գործած յանցանքը, կը զրկուի փողկապ կրելու իրաւունքէն առաւելագոյնը չորս շաբաթ: Այս պատիժը կը նշանակէ թէ զրկուած է սկաուտական բոլոր իրաւունքներէն, բայց զերծ չէ կացուցուած իր պարտաւորութիւններէն:

6) **Աստիճանագրկում/պաշտօնագրկում.** Երբ աստիճանաւորը իր կոչումին վայել բարձրութեան վրայ չի գտնուիր վարչական անկարողութեան, բարոյական սայթաքումի եւ այլ պատճառներով, իրեն վստահուած աստիճանը/պաշտօնը ետ կ'առնուի: Նման պատիժ մը կը տնօրինուի աստիճանաւորին գործունէութիւնը հակակշռող մարմինին կամ ժողովին կողմէ:

7) **Ղաղրեցում սկաուտական շարքերէն.** Յաճախակի պատիժներու ենթարկուած սկաուտը, որ իր ընթացքով կը խանգարէ խումբին աշխատանքները, կը ղաղրեցուի սկաուտական շարքերէն:

8) **Միութեանական շարքերէն հեռացումի առաջարկ.** Միութեան գոյքը իւրացնող, նիւթական եւ բարոյական սայթաքումներ ունեցած սկաուտին համար նուիրապետական կարգերով կրնայ պահանջուիլ Միութեան շարքերէն հեռացում: Այս պահանջը կրնայ բանաձեւել Շրջանային Սկաուտական Խորհուրդը միայն, քննելէ ետք ենթակային պարագան եւ լսելէ ետք անոր բացատրութիւնները: Պատիժը կը սահմանուի Շրջանային Վարչութեան կողմէ, լսելէ ետք Շրջանային Սկաուտական Խորհուրդի գրաւոր զեկուցումը եւ ենթակային գրաւոր բացատրութիւնները:

**Յօդ. 199.-** Վերոյիշեալ պատիժները (բացի Յօդ. 198 - ութերորդէն) սկաուտական են եւ սկաուտը չեն զրկեր Միու-

թեմական այլ գործունեութենէ: Անոնք կը վերաբերին 18էն վար տարիք ունեցող սկաուտներուն:

**30Դ. 200.-** Միութեանական պատիժներու մեկնաբանութիւնը կը կատարուի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի տրամադրութեանց համաձայն:

**30Դ. 201.-** Միութեանական պատիժները կը տնօրինուին Մասնաճիւղի, Շրջանային կամ Կեդրոնական Վարչութեանց կողմէ, անոնց նշանակած սկաուտական մարմիններուն առաջարկով:

## ՏԱՐԱԶՆԵՐ ԵՒ ԳՈՅՔԵՐ

**30Դ. 202.-** Զ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շարքերուն տարագները կ'որոշէ Կեդրոնական Վարչութիւնը:

Երբ երկրի մը Զ.Ս.Ը.Ս.ի սկաուտները պարտաւորուած են կրելու տեղւոյն սկաուտական տարագները, հնարաւորութեան սահմաններուն մէջ պէտք է կրեն Զ.Ս.Ը.Ս.ի գօտին, Զ.Ս.Ը.Ս.ի նշանակը՝ գլխարկին վրայ եւ Զ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շուշանածաղիկը՝ ձախ կուրծքին վրայ եւ եռագոյն երիզ մը աջ գրպանին վերեւ:

**30Դ. 203.-** Սկաուտը իր տարագին վրայ կրնայ կրել Սկաուտական Ներքին Կանոնագրով արտօնուած նշաններ:

**30Դ. 204.-** Սկաուտական խումբերը կ'ունենան իրենց յատուկ կազմածներն ու գոյքերը, որոնք Միութեան սեփականութիւնն են:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**30Դ. 205.-** Իւրաքանչիւր շրջան կ'ունենայ իր Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնը, որ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի հաւանութենէն ետք, կը վաւերացուի Զ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**307. 206.-** Շրջաններու Ներքին Սկաուտական Կանոնագրութիւնները կրնան պատշաճեցուած ըլլալ շրջանի կամ երկրի սկաուտական ընդհանուր կանոններուն: Շրջան մը, ուր Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական շարքերը անհրաժեշտութիւն չեն զգար կապուելու իրենց երկրի սկաուտական շարքերուն, կրնան իրենց յատուկ ներքին կազմակերպութիւնը ունենալ՝ միշտ յարգելով Հ.Ս.Ը.Մ.ի Սկաուտական Կանոնագրութեան սկզբունքները եւ տրամադրութիւնները:

**307. 207.-** Շրջաններու Ներքին Կանոնագրութեանց մէջ անհրաժեշտ է յստակօրէն ճշդել.-

ա) Սկաուտական շարքերու ընդունման պայմանները:

բ) Զանազան բաժանմունքներու տարիքները եւ փոխանցումներու պայմանները:

գ) Սկաուտական ժողովներու եւ վարչական մարմիններու յարաբերութիւնները, պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւններու սահմանները:

դ) Աստիճաններու տուչութեան պայմանները եւ արարողութիւնները:

**307. 208.-** ա) Մասնաճիւղէ-մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի մասնաճիւղի Վարչութեան արտօնութեամբ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի գիտակցութեամբ եւ Շրջանային Վարչութեան վաւերացումով:

բ) Շրջանէ-շրջան տեղափոխութեան պարագային, ենթական պէտք է ունենայ իր պատկանած շրջանի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան հաստատագիրը:



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ  
ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ





## ՆՊԱՏԱԿ

Ընդհանուր բանակումներու նպատակն է.-

1) Ի մի հաւաքել Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու արի-ները, արեւոյշները, երէցներն ու պարմանուհիները:

2) Տալ ազգային եւ միութենական դաստիարակութիւն եւ առիթ ստեղծել փոխադարձ ծանօթացման:

3) Ստարել Հ.Մ.Ը.Մ.ի սկաւորութեան միջազգային ծա-նօթացման:

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**ՅՕԴ. 209.-** Ընդհանուր բանակումներուն կրնան մաս-նակցիլ հետեւեալ պայմանները լրացնող արիները, արե-նոյշները, երէցներն ու պարմանուհիները.-

ա) Ամբողջացուցած ըլլան 14 տարիքը:

բ) 10 օրեր սկաւտական բանակումի մասնակցած ըլ-լան:

գ) Ունենան քաջառողջ վիճակ:

**ՅՕԴ. 210.-** Ընդհանուր բանակումին կարենալ մասնակ-ցելու համար թեկնածուն կը ներկայացնէ դիմումնագիր, տրամադրուած Կեդրոնական Վարչութեան կողմէ: Դիմում-նագրին մէջ կ'արձանագրուին ենթակային.-

ա) անունն ու մականունը,

բ) ծննդեան թուականը,

գ) հպատակութիւնը,

դ) անցագրի (passport) թիւը եւ թուականը,

ե) պատկանած շրջանին եւ մասնաճիւղին անունը,

զ) սկաւտական կարգը, աստիճանը եւ պաշտօնը,

է) մասնակցած բանակումներու թուականը եւ վայրը,

ը) հասցէն եւ հեռաձայնի թիւերը,

թ) բժշկական հաստատագիրը:

## ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹՅՒՆ

**30Գ. 211.-** Իւրաքանչիւր շրջանի պատուիրակութիւն կը բաժնուի խմբակներու/տասնեակներու եւ խումբերու/փաղանգներու:

ա) 5-7 արիներ/արեւոյշներ կը կազմեն մէկ խմբակ:

բ) 8-10 երէցներ/պարմանուհիներ կը կազմեն մէկ տասնեակ:

գ) 2-4 խմբակներ կը կազմեն արիներու/արեւոյշներու խումբ:

դ) 2-4 տասնեակներ կը կազմեն երէցներու/պարմանուհիներու փաղանգ:

ե) Պատուիրակութիւններուն ընկերակցող պատասխանատու աստիճանաւորներուն թիւը կը ճշդէ Կեդրոնական Վարչութիւնը՝ մասնակցողներու թիւին համեմատութեամբ:

զ) Պատուիրակութիւն մը կը մասնակցի նուազագոյնը մէկ խմբակով/տասնեակով:

է) Իւրաքանչիւր պատուիրակութիւն կ'ունենայ մէկ գլխաւոր պատասխանատու:

**Ծանօթ.-** Ընդհանուր բանակումին կրնան մասնակցիլ Կեդրոնական Վարչութեան ճշդած թիւէն աւելի աստիճանաւորներ (խմբապետ/ուհի, Փոխ-խմբապետ/ուհի): Այդ աստիճանաւորները կը մնան բանակումի ընդհանուր խմբապետութեան տրամադրութեան տակ եւ կը ստանձնեն անոր ճշդած պարտականութիւնները:

## ԲԱՆԱԿՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՒՆ

**30Գ. 212.-** Ընդհանուր բանակումը կ'ունենայ Գործադիր Մարմին մը՝ բաղկացած 5-9 անդամներէ, որոնք կը նշանակուին Յ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**Ծանօթ.-**

ա.- Գործադիր Մարմինը կը բաղկանայ.

- Ընդհանուր խմբապետ/խմբապետուհիէ

- Փոխ խմբապետէ

-Փոխ խմբապետուհի  
-Կազմակերպչական-դաստիարակչական խմբապետ/խմբապետուհի  
-Յարաբերական խմբապետ/խմբապետուհի  
բ.-Ի պահանջեալ հարկին, կարելի է ճշդել յաւելեալ պաշտօններ:  
գ.-Գործադիր Մարմինի անդամներուն պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները գրաւոր ձեւով կը ճշդուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**30Գ. 213.-** Գործադիր Մարմինը կը հսկէ ընդհանուր բանակումի աշխատանքներու գործադրութեան:

**30Գ. 214.-** Գործադիր Մարմինին կ'օժանդակեն բանակումին մասնակցող պատուիրակութիւնները գլխաւորող խմբապետներն ու խմբապետուհիները, որոնց կը տրուի պաշտօն, ըստ բանակավայրի կարիքներուն, ճշդուած Ընդհանուր խմբապետին կողմէ:

**30Գ. 215.-** Ընդհանուր բանակումը կ'ունենայ օրուան հերթապահ մը, որ կը գործադրէ օրուան յայտագիրը: Օրուան հերթապահը կը ճշդուի ընդհանուր բանակումի եռամսհամ խմբապետական կազմին կողմէ:

**30Գ. 216.-** Ընդհանուր բանակումը կը կազմակերպուի չորս տարին անգամ մը: Կը տեւէ 10էն 15 օր: Բանակումի պաշտօնական բաժինը կը տեւէ 8էն 10 օր:

**30Գ. 217.-** Գործադիր Մարմինը կը պատրաստէ ընդհանուր բանակումի թեման եւ աշխատանքները, որոնք Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք, վերջնականացած յայտագիրը կը յղուի շրջաններուն նախընտրաբար բանակումի թուականէն մէկ տարի կամ ամենաուշը վեց ամիս առաջ:

**30Գ. 218.-** Բանակումը կ'ունենայ խորհրդանիշ, քայլերգ եւ դրօշակ, պատրաստուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ

**ՅՕԴ. 219.-** Ընդհանուր բանակումին մասնակցող արի-ները, արենոյշները, երէցները եւ պարմանուհիները կը համախմբուին իրարմէ անջատ 4 բանակատեղիներու մէջ: Կ'ունենան ներքին աշխատանքներու յայտագիր, որ պէտք է խանգարէ Գործադիր Մարմինի ճշդած ընդհանուր աշխատանքները:

**ՅՕԴ. 220.-** Իւրաքանչիւր բանակատեղի կ'ունենայ իր խմբապետական կազմը, որուն իրաւասութիւնները եւ պարտաւորութիւնները կը ճշդէ բանակումի Գործադիր Մարմինը:

## ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸ

**ՅՕԴ. 221.-** Ընդհանուր բանակումի բանակավայրը կը ճշդէ Յ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

Բանակումի թուականէն մէկ տարի առաջ որոշուած վայրը (շրջան-երկիր) կը փոխանցուի շրջաններուն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**ՅՕԴ. 222.-** Կեդրոնական Վարչութիւնը մօտէն կը հետեւի բանակումի բոլոր աշխատանքներուն: Բանակումէն ետք կը կազմէ թղթածրար, ուր ամփոփուած կ'ըլլան բանակումին հետ կապուած բոլոր տեղեկութիւնները (ծրագիր, նախահաշիւ, տեղեկագիր, նիւթական հաշուեկշիռ, նկարագրականներ, վաւերաթուղթեր, եւայլն):



ԺՈՂՈՎԱԿԱԿԱՆ  
ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ

**Վալերացուած՝ Զ.Ս.Ը.Մ.ի Դ. Պատգամաւորական  
Ընդհանուր Ժողովին կողմէ, Աթէնք, 1987**



Շ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական կեանքին սիրտը կը կազմեն ժողովները եւ վարչութիւնները: Անոնք է, որ մղում կու տան Միութեան գործունէութեան՝ կը գծեն ուղեգիծեր, կ'ընտրեն պատասխանատուներ, կ'առնեն գործադրելի որոշումներ:

Անհրաժեշտ է, որ ժողովները եւ վարչութիւնները իրենց ժողովական աշխատանքները տանին կանոնաւոր կերպով եւ վարանումներ, թիրիմացութիւններ, անհատական սխալ մեկնաբանութիւններ չստեղծեն դժուարութիւններ եւ չդանդաղեցնեն այդ աշխատանքները, մոռցնել տալով հիմնականը՝ գործը:

Շ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Կանոնագրութիւնը եւ Ներքին Կանոնագրութիւնները սահմանած են ժողովներու եւ վարչութիւններու իրաւասութիւններն ու պարտականութիւնները եւ ճշդած՝ անոնց յարաբերութիւնները:

Անսպասելի է սակայն, որ ժողովական գործնական կեանքին վերաբերող ամէն տրամադրութիւն տեղ գտած ըլլայ կանոնագրութիւններուն մէջ: Ժողովական ընդհանուր ըմբռումները եւ միութենական աւանդութիւնները կը կազմեն անգիր կանոններ, որոնք, կանոնագրութիւններուն կողքին՝ կը պայմանաւորեն ժողովներու եւ վարչութիւններու ժողովական կեանքը:

Շենտեաբար, Շ.Մ.Մ.ի համագաղութային կառույցին հաստատումը, ժողովական տարբեր ըմբռնում ունեցող երկիրներու մէջ նոր մասնաձիւղերու հիմնումը, ինչպէս նաեւ տեղ-տեղ ժողովական ասանդութիւններու տկարացումը անհրաժեշտութիւն դարձուցին ժողովական եւ վարչական կանոններու մշակումը:

Ժողովական եւ վարչական կանոնները կոչուած են ուղեցոյց ծառայելու Շ.Մ.Մ.ի ժողովներուն եւ վարչութիւններուն՝ կանոնաւորելու համար իրենց ժողովական կեանքը:

**Շ.Մ.Մ.ի  
Կեդրոնական Վարչութիւն**

## Ա.- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### ԺՈՂՈՎԻ ԲԱՅՈՒՄ - ԱՌԺԱՄԵԱՅ ԴԻՒԱՆ

**Յօդ. 223.-** Ժողովին բացումը կը կատարէ ժողովը հրաւիրած վարչութեան ներկայացուցիչը, որ կը ձեռնարկէ նաեւ առժամեայ դիւանի ընտրութեան:

**Ծանօթ.-** Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովի պարագային անհրաժեշտ չէ առժամեայ դիւանի կազմութիւնը:

**Յօդ. 224.-** Առժամեայ դիւանը կ'ունենայ ատենապետ մը եւ ատենադպիր մը, որոնք կ'ընտրուին առանձին-առանձին, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաջին քուէարկութեան երբ պարզ մեծամասնութիւն չէ գոյացած, երկրորդ քուէարկութեան առաւելագոյն քուէ ստացողը ընտրուած կը նկատուի:

**Ծանօթ.-** Առժամեայ եւ մնայուն դիւաններուն մաս չեն կրնար կազմել խորհրդակցական ձայնով հրաւիրուած ժողովականները, ժողովի հրաւիրած վարչութեան եւ գերադաս վարչութիւններուն ներկայացուցիչներն ու անդամները:

**Յօդ. 225.-** Մասնաճիղի եւ մեկուսի շրջանի վարչութիւններու դիւանները կը վարեն մասնաճիղի եւ մեկուսի շրջանի այն Անդամական Ընդհանուր Ժողովները, որոնց օրակարգին վրայ չեն գտնուիր վարչութեան հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն. հետեւաբար՝ առժամեայ եւ մնայուն դիւաններու ընտրութիւն տեղի չ'ունենար:

Շրջանային Ներկայացուցչական ժողովին եւ Պատգամատրական Ընդհանուր Ժողովին կը ձեռնարկուի առժամեայ եւ մնայուն դիւաններու ընտրութեան, ինչ ալ ըլլայ օրակարգը:

## ԼԻԱԶՕՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՍՏՈՒՓՈՒՄ

**Յօդ. 226.-** Շրջանային Ներկայացուցչական ժողովին մասնակցող մասնաճիւղերու ներկայացուցիչները, Պատգամատրական Ընդհանուր Ժողովին մասնակցող Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու պատգամատրները պարտին ի ձեռին ունենալ զիրենք ընտրած ժողովներու դիւաններուն կողմէ տրուած լիազօրագիրներ:

Վարչութիւններու ներկայացուցիչները իրենց լիազօրագիրները կը ստանան իրենց վարչութիւններէն:

**Յօդ. 227.-** Առժամեայ դիւանը կը կատարէ լիազօրագիրներու ստուգումը, ի հարկին լսելով լիազօրագիր ներկայացնող ժողովականին կամ ժողովի հրաւիրած վարչութեան բացատրութիւնները, հաստատումները առարկութիւնները: Առժամեայ դիւանը լիազօրագիրներու ստուգումի աշխատանքին արդիւնքը կը զեկուցէ ժողովին:

**Ծանօթ.-** Ժողովը կրնայ լիազօրագիրներու ստուգումը յանձնել իր կողմէ ընտրուած յանձնախումբի մը, որ իր աշխատանքին արդիւնքը կը զեկուցէ առժամեայ դիւանին գլխաւորութեամբ գումարուող ժողովին:

**Յօդ. 228.-** Ժողովականի մը լիազօրագիրին, մասնաճիւղի մը կամ շրջանի մը մասնակցութեան շուրջ ծագած հարցերուն յստակացումը կը կատարէ մնայուն դիւանով գումարուող ժողովը, իր առաջին նիստին:

## ՄՆԱՅՈՒՆ ԳԻՒԱՆ

**Յօդ. 229.-** Լիազօրագիրներու ստուգումէն ետք, առժամեայ դիւանը կը ձեռնարկէ մնայուն դիւանի ընտրութեան:

**Յօդ. 230.-** Մնայուն դիւանը կ'ունենայ.-

ա.- Մասնաճիւղի կամ Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովներուն՝ ատենապետ մը եւ մէկ կամ երկու ատենադպիր:

բ.- Շրջանային Ներկայացուցչական և Պատգամատրական Ընդհանուր Ժողովներուն՝ երկու ատենապետ և երկու կամ չորս ատենադպիր:

**Յօդ. 231.-** Մնայուն դիւանի ընտրութիւնը կը կատարուի ձեռամբարձ կամ գաղտնի քուէարկութեամբ, ըստ ժողովի կամքին և ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 232.-** Մնայուն դիւանը՝

ա.- Պաշտօնապէս կը հաստատէ ժողովին օրինակութիւնը, ժողովին վճիռին ենթարկելէ ետք ժողովականներու և շրջաններու մասնակցութեան հարցերու լուծումը:

բ.- Կը ձեռնարկէ խորհրդակցական ձայնով հրաւիրելի ժողովականներու ընտրութեան, ձեռամբարձ քուէարկութեամբ և ձայներու պարզ մեծամասնութեամբ:

գ.- Կը ձեռնարկէ հետեւեալ յանձնախումբերու ընտրութեան՝

- Յարաբերական-արխիւային,
- Հաշուեքննիչ-նախահաշիւ,
- Բանաձեւի,
- Աշխատանքային յանձնախումբեր,
- Քուէախոյզ,
- Դատական (եթէ դատական հարց կայ):

**Ծանօթ.-**

ա.- Խորհրդակցական ձայնով ժողովականները յանձնախումբերու անդամ կրնան ընտրուիլ, բայց ոչ՝ ժողովի հրաւիրուած և գերադաս վարչութիւններու անդամները, ոչ ալ՝ վարչութեան ենթակայ յանձնախումբերու և խորհուրդներու ներկայացուցիչները:

բ.- Յանձնախումբը կը բաղկանայ 3 կամ 5 հոգիէ, ըստ ժողովի կամքին:

գ.- Յանձնախումբի անդամներու ընտրութիւնը կը կատարուի մէկ առ մէկ, ձեռամբարձ քուէարկութեամբ: Առաւելագոյն քուէ ստացողները ընտրուած կը նկատուին:

## **ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ**

**Յօդ. 233.-** Յարաբերական-արխիւային յանձնախումբը կը քննէ հաշուետու վարչութեան թղթածրարները (ատենագրութիւն, նամակագրութիւն, շրջաբերական, անդամներու և գոյքե-

րու ցանկերը) եւ ժողովին կը ներկայացնէ գրաւոր զեկոյց՝ թղթածրարներու վիճակին ու պահպանման եղանակին, ինչպէս նաեւ՝ վարչութեան տարած յարաբերական եւ գործելակերպին մասին:

**Յօդ. 234.-** Հաշուեքննիչ-նախահաշիւ յանձնախումբը կը քննէ հաշուետու վարչութեան հաշիւները, նկատի առնելով որդեգրուած հաշուապահական դրութիւնը, կը բաղդատէ քուէարկուած եւ իրականացած պիտճէները եւ գրաւոր զեկուցում կը ներկայացնէ անոնց մասին:

Յանձնախումբը կը պատրաստէ նաեւ յաջորդ շրջանի պիտճէն, նկատի ունենալով ժողովի այն որոշումները, առաջարկները եւ թելադրանքները, որոնք նիւթականի կարիք ունին:

**Յօդ. 235.-** Բանաձեւի յանձնախումբը կը խմբագրէ հաշուետու վարչութեան գործունէութեան շուրջ քուէարկելի գնահատումի բանաձեւը, նկատի ունենալով անոր ներկայացուցած տեղեկագիրները, անոնց շուրջ եղած հարցումներն ու լուսաբանութիւնները եւ գնահատական ու քննադատական արտայայտութիւնները: Գնահատումի արժեչափերն են.-

**Անբաւարար, բաւարար, գոհացուցիչ, գնահատելի, յոյժ գնահատելի:**

Յանձնախումբը կը բանաձեւէ նաեւ ներկայացուած առաջարկները, նկատի ունենալով թեր ու դէմ կարծիքները:

**Յօդ. 236.-** Քուէախոյզ յանձնախումբը, գաղտնի քուէարկութեան միջոցին, կը կատարէ քուէաթուղթերու բաժանումը, հաւաքումը, ընթերցումը եւ արդիւնքներու արձանագրումը, դիւանին հսկողութեամբ:

**Յօդ. 237.-** Դատական յանձնախումբը կը քննէ դատական հարցերը, նկատի ունենալով թղթածրարները եւ ի պահանջեալ հարկին լսելով կողմներուն լուսաբանութիւններն ու բացատրութիւնները:

**Ծանօթ.-** Դատական հարց կը նկատուին պատիժի մը դէմ բողոքը, պատիժի մը ներման կամ զայն բաւ համարելու դիմումները, որոնք ժողովին

կ'ողողուին պատժուած անդամին կամ պատժուած վարչութեան կողմէ միայն:

Ժողովին դիւանը կը ճշդէ դիմումին օրինաւորութիւնը՝ նկատի ունենալով կանոնագրային տրամադրութիւնները եւ ըստ այնմ դիմումին ընթացք կու տայ կամ կը մերժէ ընթացք տալ եւ այս մասին կը գեկուցէ ժողովին: Ժողովին կը պատկանի դիմումի մը շուրջ ծագած հարցին լուծումը:

Դիւանը դատական յանձնախումբին կը փոխանցէ դատական բոլոր հարցերը՝ իրենց թղթածրարներով:

## **ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

### **Յօդ. 238.- Ատենապետը՝**

ա.- Կը բանայ եւ կը վարէ նիստերը:

բ.- Չայն կու տայ ժողովականներուն:

գ.- Հարցերու քննութեան ընթացքին պարբերաբար կ'ամփոփէ արտայայտուած միտքերը, առանց իր կողմէ որեւէ արժեւորում կատարելու:

դ.- Հարցի մը քուէարկութեան հանգրուանին՝ բանաձեւուած առաջարկը կամ առաջարկները յստակ կերպով կը ներկայացընէ ժողովականներուն, սկսելով առաջին առաջարկէն:

ե.- Քուէարկութեան հանգրուանին ձայն չի կրնար տալ յաւելեալ լուսաբանութիւններու կամ նոր առաջարկներու համար:

զ.- Կը կատարէ ձեռամբարձ քուէներու ստուգումը, դիւանի միւս անդամներուն օժանդակութեամբ:

է.- Հարցի մը մասին ժողովականի իր կարծիքը յայտնելու կամ առաջարկ մը ներկայացնելու համար, ատենապետութիւնը կը յանձնէ միւս ատենապետին, իսկ չգոյութեան պարագային՝ ատենադպիրին:

ը.- Կը հսկէ ժողովի կանոնաւոր ընթացքին, նկատի ունենալով ժողովականներու արտայայտութիւններու պատշաճութիւնը, նիւթէն շեղումները, կրկնութիւնները եւ ի պահանջեալ հարկին կարգի կը հրաւիրէ զանոնք:

թ.- Հաշիւ կը պահանջէ բացակայող կամ ուշացող ժողովականներէն եւ կամ նախապէս արտօնութիւն կու տայ անոնց՝ բացակայելու, ուշանալու կամ ժողովասրահէն դուրս գալու:

ժ.- Կը փակէ նիստերը:

### **Յօդ. 239.- Ատենադպիրները՝**

ա.- Իւրաքանչիւր նիստին կը պահեն ներկայ-բացականերու տոմարը:

բ.- Կարգով կ'արձանագրեն ձայն ուզող ժողովականներուն անունները եւ նոյն կարգով զանոնք կը փոխանցեն ատենապետին:

գ.- Կը պահեն նիստերու ատենագրութիւնները՝ արձանագրելով նիստերու կարգաթիւը, գումարման թուականը, ժամն ու վայրը, ներկաներուն, բանաւոր բացականերուն, բացականերուն թիւը, ժողովը վարող դիւանի անդամներուն անունները: Կ'արձանագրեն նաեւ ժողովականներու արտայայտած միտքերը, թեր ու դէմ կարծիքները, առաջարկները, ի պահանջեալ հարկին՝ անոնց անուններով, քուէարկուած որոշումները՝ իրենց արդիւնքներով, այսինքն՝ թեր ու դէմ եւ ձեռնպահ քուէներուն թիւը:

դ.- Յաջորդ նիստին կը կարդան նախորդ նիստին ատենագրութիւնը:

**Յօդ. 240.-** Ժողովի վերջին նիստին ատենագրութիւնը կարելի չէ յետաձգել յաջորդ վարչութեան շրջանի աւարտին գումարտող ժողովին:

Վերջին նիստի ատենագրութեան վաւերացման համար ժողովը կ'որդեգրէ հետեւեալ ձեւերէն մէկը, ըստ յարմարութեան.-

ա.- Ժողովի աւարտին դիւանը նիստի կը հրաւիրէ ժողովը՝ ատենագրութեան վաւերացման միակ օրակարգով, ժողովավայրը մնացած ժողովականներով:

բ.- Ժողովի աւարտին դիւանը կը ներկայացնէ վերջին նիստի սեւագրութիւնը՝ առ ի վաւերացում, ատենագրութեան շարահիսութիւնը վերապահելով իրեն:

գ.- Վերջին նիստի ատենագրութեան վաւերացումը կը վստահուի դիւանին (կամ ալ՝ դիւանին եւ նորընտիր վարչութեան):

**Յօդ. 241.-** Դիւանը իր մօտ կը կեդրոնացնէ եւ նորընտիր վարչութեան կը փոխանցէ ժողովին վերաբերող բոլոր թղթածրարներն ու արձանագրութիւնները՝ տեղեկագիր, հաշունկշիռ, ատենագրութիւն, զեկուցագիր, եւ այլն:

**Յօդ. 242.-** Դիւանը կը պատրաստէ ժողովին կողմէ ընտրուած վարչականներու, ներկայացուցիչներու կամ պատգամաւորներու հաստատագիրները եւ լիազօրագիրները՝ ուղղուած համապատասխան գերադաս վարչութիւններու եւ կամ ժողովներու.-

ա.- Մասնաճիւղի Վարչութեան ընտրութիւն՝ հաստատագիր ուղղուած Շրջանային Վարչութեան:

բ.- Մասնաճիւղի ներկայացուցիչ՝ լիազօրագիր ուղղուած Շրջանային Ներկայացուցչական ժողովին:

գ.- Մեկուսի Շրջանի Վարչութիւն եւ Շրջանային Վարչութիւն՝ հաստատագիր ուղղուած Կեդրոնական Վարչութեան:

դ.- Մեկուսի Շրջանի եւ Շրջանի պատգամաւորներ՝ լիազօրագիր ուղղուած Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

**Յօդ. 243.-** Ժողովի փակումէն ետք, դիւանը նիստի կը հրափրէ նորընտիր վարչութիւնը՝ կազմելու համար իր դիւանը:

Ժողովին դիւանը նորընտիր վարչութեան կը փոխանցէ իրեն մօտ գտնուող ժողովին վերաբերող ամէն տեսակի արձանագրութիւն եւ քղթածրար:

**Ծանօթ.-** Վարչութեան դիւանի կազմութեան անկարելիութեան պարագային, նորընտիր վարչութեան ներկայ անդամները կը նշանակեն ներկայացուցիչ մը, որուն պարտականութիւնն է ամէնէն կարճ ժամանակամիջոցի մէջ նիստի հրափրել նորընտիր վարչութիւնը՝ կազմելու իր դիւանը:

Դիւանի կազմութենէն ետք կը կատարուի փոխանցում՝ շրջանաւարտ եւ նորընտիր վարչութիւններու միջեւ:

## **Ժ Ո Ղ Վ Ի Օ Ր Ի Ն Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ն**

**Յօդ. 244.-** Ժողովի օրինականութիւնը ճշդուած է **Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրով:**

ա.- Մասնաճիւղի եւ Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողով (Յօդ. 18, էջ 14)

բ.- Շրջանային Ներկայացուցչական Ժողով (Յօդ. 25, էջ 15)

գ.- Պատգամաւորական Ընդհանուր Ժողով (Յօդ. 43, էջ 20)

**Յօդ. 245.-** Որեւէ որոշումի քուէարկութեան համար, անհրաժեշտ է ժողովի պարզ մեծամասնութեան ներկայութիւնը:

## ՕՐԱԿԱՐԳ

**Յօդ. 246.-** Ժողովի օրակարգը նախապես ճշդուած կ'ըլլայ ժողովի հրաւիրած վարչութեան կողմէ: Ժողովի դիւանը կրնայ փոփոխութիւն մտցնել օրակարգի դասաւորումին մէջ: Եթէ ժողովական մը փոփոխութեան դէմ առարկէ եւ իր առարկութիւնը երկրորդուի, դիւանը պարտաւոր է փոփոխութեան իր առաջարկը դնել ձեռամբարձ քուէարկութեան: Փոփոխութիւնը կը կատարուի ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Օրակարգի դասաւորման փոփոխութիւն կրնայ առաջարկել նաեւ ժողովական մը: Փոփոխութիւնը կը կատարուի, եթէ դիւանը համաձայն է եւ անոր դէմ առարկող չկայ: Երկրորդուած առարկութեան պարագային, փոփոխութեան առաջարկը կը դրուի քուէարկութեան: Նոյնպէս, քուէարկութեան կը դրուի դիւանին կողմէ մերժուած եւ սակայն երկրորդուած փոփոխութեան որեւէ առաջարկ:

**Յօդ. 247.-** Նոր վարչութեան, ներկայացուցիչներու եւ պատգամաւորներու ընտրութիւնները կը կազմեն օրակարգի վերջին կէտը, զոր կարելի չէ առաջ բերել:

**Յօդ. 248.-** Օրակարգի վրայ նոր կէտ մը աւելցնելու առաջարկ կրնայ ներկայացուիլ դիւանին կամ ժողովականի մը կողմէ: Յաւելումը կը կատարուի, երբ դիւանին առաջարկը կամ ժողովականին երկրորդուած առաջարկը ձեռամբարձ քուէարկութեամբ կը ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

**Յօդ. 249.-** Ոչ մէկ ձեռով կարելի է օրակարգի վրայ աւելցնել պաշտօնավարող վարչութեան հաշուեքննութիւնը եւ նոր վարչութեան մը ընտրութիւնը, երբ այս կէտերը նախապէս չեն դրուած օրակարգի վրայ, այսինքն՝ երբ ժողովը վարչութեան հաշուետուութեան եւ նոր վարչութեան ընտրութեան ժողով մը չէ:

**Յօդ. 250.-** Ժողովականները իրաւունք չունին պաշտօնավարող վարչութեան գործունէութիւնը քննադատելու կամ անոր մասին քննադատական արտայայտութիւն ընելու այն ժողով-

ներում, որոնց օրակարգին վրայ վարչութեան հաշուետուութեան կէտը չէ ճշդուած: Ժողովականները կրնան լուսաբանական հարցումներ ուղղել եւ ընել առաջարկներ ու թելադրանքներ:

### **ԺՈՂՈՎԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ ՉԱՅՆ ԱՌՆԵԼ ԵՒ ԽՕՍԻԼ**

**Յօդ. 251.-** Ժողովական մը խօսելու համար ձայն կ'ուզէ դիւանէն եւ խօսիլ կը սկսի, երբ ատենապետը ձայն տայ իրեն՝ անմիջապէս կամ ըստ արձանագրութեան կարգին:

**Յօդ. 252.-** Խօսք առնող ժողովականը իր խօսքը կ'ուղղէ դիւանին:

**Յօդ. 253.-** Ոչ մէկ ժողովական կրնայ ընդմիջել խօսող ժողովական մը:

**Յօդ. 254.-** Երբ բազմաթիւ են ձայն ուզող ժողովականները, անոնց անունները կարգով կ'արձանագրուին դիւանին կողմէ: Երբ այլեւս ձայն ուզող չկայ, ատենապետը փակուած կը յայտարարէ ձայն ուզողներու ցանկը եւ նոր անուններ չեն արձանագրուիր: Դիւանը կրնայ, նոյն ձեւով, ձայն ուզողներու երկրորդ ցանկի մը կազմութեան առիթ տալ: Երրորդ ցանկի մը առիթ կը տրուի դիւանին կողմէ կամ ժողովականի մը երկրորդըւած եւ քուէարկուած առաջարկով: Նոյն ժողովականը կրնայ արձանագրուիլ իրաքանչիւր ցանկին: Դիւանը կրնայ ժամանակի սահմանափակում կատարել, օրինակ, առաջին ցանկին համար խօսողներուն տրամադրելով 15 վայրկեան, երկրորդին՝ 7, երրորդին՝ 5:

### **ԽՕՍՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ**

**Յօդ. 255.-** Կան խօսքի հետեւեալ տեսակները .-

- ա.- Լուսաբանական հարցում,
- բ.- Ըստ էութեան արտայայտութիւն,
- գ.- Առաջարկ,
- դ.- Ըստ կարգի արտայայտութիւն:

## *ԼՈՒՍԱՔԱՆԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄ*

**Յօդ. 256.-** Լուսաբանական հարցում կ'ուղղուի հաշուետու վարչութեան գործունեութեան շուրջ եւ հարցի մը քննութեան կամ առաջարկի մը առիթով:

ա.- Հաշուետու վարչութեան գործունեութեան շուրջ եւ նախա-քան անոր ըստ էութեան քննարկումը, լուսաբանական հարցում կ'ուղղուի տեղեկագիրին մէջ անհասկնալի կամ մութ մնացած կէտի մը պարզաբանումին կամ յաւելեալ լուսաբանութեան հա-մար: Լուսաբանական հարցում մը չի կրնար գնահատանքի կամ քննադատական բնոյթ եւ շեշտ ունենալ:

Հարցումներուն կարելի է պատասխանել, լսել է ետք բոլոր հարցումները կամ հարցում առ հարցում:

Վարչութիւնը կրնայ դիւանէն կարճ դադար մը ուզել՝ պա-տասխաններուն շուրջ խորհրդակցելու համար:

բ.- Հարցի մը կամ ներկայացուած առաջարկի մը շուրջ լու-սաբանական հարցում կ'ուղղուի, ըստ այնմ կարծիք տալու կամ քուէարկելու համար:

## *ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ*

**Յօդ. 257.-** Վարչութեան գործունեութեան շուրջ ըստ էութեան արտայայտող ժողովականը կրնայ հաշիւ պահանջել վարչու-թեանէն, ընել իր հիմնաւորեալ գնահատանքը կամ քննադատու-թիւնը:

Վարչութիւնը կը պատասխանէ քննադատութիւններուն:

Բանաձեւի յանձնախումբը կը հետեւի ըստ էութեան արտա-յայտութիւններուն եւ վարչութեան պատասխաններուն, ըստ այնմ խմբագրելու համար հաշուետու վարչութեան գործունե-ութեան շուրջ քուէարկութեան դրուելիք գնահատումի բանաձեւը:

## *ԱՌԱՋԱՐԿ*

**Յօդ. 258.-** Առաջարկ մը նկատի կ'առնուի եւ քննութեան կ'ենթարկուի միայն այն պարագային, երբ երկրորդուած է այլ ժողովականի մը կողմէ: Յանձնախումբի մը ներկայացուցած առաջարկը պէտք չունի երկրորդուելու:

**Յօդ. 259.-** Առաջարկի մը քննարկումի աւարտէն ետք, ատենապետը առիթ կու տայ այլ առաջարկի մը քննարկումին:

**Յօդ. 260.-** Առաջարկի մը քննութեան ընթացքին, ժողովական մը կրնայ ներկայացուած առաջարկին մէջ բարեփոխութիւն առաջարկել: Եթէ առաջարկը ներկայացուցած ժողովականը ընդունի բարեփոխութիւնը, առաջարկը կը քննուի բարեփոխուած ձեւով: Եթէ չընդունի, բարեփոխութիւն առաջարկող ժողովականը բարեփոխութեան ենթարկած իր առաջարկը կրնայ իբրեւ նոր առաջարկ ներկայացնել: Նոյնպէս, երբ ժողովական մը համաձայն չէ բարեփոխութեան, որուն համաձայն գտնուած է առաջարկ բերողը, կրնայ սկզբնական առաջարկը ներկայացընել իբրեւ իրը:

### *ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ*

**Յօդ. 261.-** Ժողովական մը «ըստ կարգի» ձայն կ'ուզէ, դիւանին ուշադրութեան յանձնելու համար դիւանին կամ ժողովականի մը կողմէ կատարուած ժողովական շեղում մը կամ վրիպում մը, որպէսզի վերահաստատուի ժողովական կարգը:

«Ըստ կարգի» ձայն ուզողը նախապատուութիւն ունի: Երբ ժողովական մը ձայն կ'ուզէ «ըստ կարգի» ըսելով, ատենապետը կ'ընդմիջէ իր կամ ժողովականի մը խօսքը՝ լսելու համար «ըստ կարգի» արտայայտուիլ ուզողը: Ատենապետը երբ իրաւացի գտնէ «ըստ կարգի» մատնանշումը, ընթացք կու տայ անոր: Ի պահանջեալ հարկին՝ մատնանշումի մասին որոշում տալէ առաջ կը դիմէ դիւանի միւս անդամներուն կամ նոյնիսկ ժողովի կարծիքին:

### **ՏՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄԻ ՄԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ**

**Յօդ. 262.-** Ժողովին կողմէ տրուած որոշումի մը վերաբընութեան առաջարկը կրնայ ներկայացնել որոշումին ի նպաստ քուէարկած ժողովական մը միայն: Նոյնպէս՝ հարկ է, որ վերաքննութեան առաջարկը երկրորդողը ըլլայ որոշումին ի նպաստ

քուէարկած ժողովական մը: Երբ այս ձեւով երկրորդուի վերաքննութեան առաջարկը, ձայն կը տրուի երկու թեր եւ երկու դէմ արտայայտուողներու, որոնք իրենց տեսակէտը կը պարզեն առանց նոր վիճարանութիւններու:

Տրուած որոշումը վերաքննութեան կ'ենթարկուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Փոխարինող որոշումը կը տրուի ձայներու պարզ մեծամասնութեամբ եւ, հետեւաբար, կը բեկանուի նախկին որոշումը: Երբ կարելի չ'ըլլար վերաքննուած որոշումը փոխարինող որոշում մը տալ ձայներու պարզ մեծամասնութեամբ, նախկին որոշումը կը մնայ ի գօրու:

## **ՏՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄԻ ՄԸ ԲԵԿԱՆՈՒՄԸ**

**Յօդ. 263.-** Նոյն ձեւով՝ տրուած որոշումի մը բեկանումը կարելի է առաջարկել՝ առանց փոխարինող նոր որոշումի մը: Անհրաժեշտ է, որ բեկանումի առաջարկը ներկայացնեն եւ զայն երկրորդեն որոշումին ի նպաստ քուէարկած երկու տարբեր ժողովականներ: Տրուած որոշումը կը բեկանուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

## **ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ**

**Յօդ. 264.-** Ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէարկութեամբ:

Քուէարկութեան երկու ձեւ կայ՝

- **Ձեռամբարձ քուէարկութիւն,**

- **Գաղտնի քուէարկութիւն:**

ա.- **Ձեռամբարձ քուէարկութիւն** կը կատարուի ձեռքերու բարձրացումով, ընթացիկ հարցերու համար, ինչպէս՝ ատենագրութեան վաւերացում, օրակարգի փոփոխութիւն, յանձնախումբերու ընտրութիւն, բանաձեւի ընտրութիւն, ժողովական ընթացքին շուրջ ճշդում, եւայլն:

Ընդհանուր ձեւով որոշումները եւս կը տրուին ձեռամբարձ քուէարկութեամբ:

բ.- **Գաղտնի քուէարկութիւն** կը կատարուի դիւանին կողմէ բաժնուած թղթիկներուն վրայ կատարուած արձանագրութեամբ: Գաղտնի քուէարկութեան պարագաները ճշդուած են **Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրով**, ինչպէս՝ վարչութիւններու ընտրութիւն, ներկայացուցիչներու եւ պատգամատրներու ընտրութիւն:

Ժողովական մը, սակայն, ձեռամբարձ քուէարկութեան փոխարէն կրնայ գաղտնի քուէարկութիւն առաջարկել: Առաջարկը երբ երկրորդուի, կը դրուի ձեռամբարձ քուէարկութեան եւ կը գործադրուի, երբ ստանայ ձայներու պարզ մեծամասնութիւնը:

## **Թ Ե Ր, Գ Է Մ, Չ Ե Ռ Ն Պ Ա Հ**

**Յօդ. 265.**- Առաջարկի մը քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ թեր կամ դէմ քուէարկել եւ կամ չմասնակցիլ քուէարկութեան՝ մնալով ձեռնպահ:

Գաղտնի քուէարկութեան ատեն ձեռնպահ ժողովականը իր քուէաթուղթը ճերմակ կը վերադարձնէ:

Անձերու ընտրութեան ատեն, ժողովականը կը քուէարկէ ի նպաստ իր նախընտրած թեկնածուներուն, գաղտնի քուէարկութեան ատեն կը գրէ անոնց անունները կամ կը մնայ ձեռընպահ:

**Ծանօթ.**- Երբ ձեռնպահ մնացողներու թիւը քուէարկողներու պարզ մեծամասնութիւնը կը կազմէ, քուէարկութեան դրուած առաջարկը կը վերաքննուի ժողովին կողմէ:

## **Մ Ե Ծ Ա Մ Ա Մ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**

**Յօդ. 266.**- Ժողովը իր կամքը կ'արտայայտէ քուէներու մեծամասնութեամբ:

**Յօդ. 267.**- Կայ երկու տեսակ մեծամասնութիւն՝ պարզ մեծամասնութիւն եւ երկու երրորդի մեծամասնութիւն:

Քուէներուն կէսէն մէկ կամ կոտորակ մը աւելին կը կազմէ պարզ մեծամասնութիւն:

Քուէներուն երկու երրորդը կը կազմէ երկու երրորդի մեծամասնութիւն եւ պարզ մեծամասնութիւն:

**Ծանոթ.-**

ա.- Քուէներու ստուգման ատեն քուէարկողներու ընդհանուր թիւն կը գեղչուին ձեռնպահ կամ ճերմակ քուէները եւ գեղչուած թիւին վրայ կը հաշւուի պարզ կամ երկու երրորդի մեծամասնութիւնը (բացի Յօդ. 265ի ծանօթ բաժինէն, էջ 87):

բ.- Քուէաթուղթ մը, որ ընտրելի անձերու թիւն աւելի անուն կը կրէ, ամբողջութեամբ չեղեալ կը համարուի եւ կը նկատուի ճերմակ քուէ:

Չեռամբարձ քուէարկութեան ատեն ժողովական մը կրնայ քուէարկել միայն մէկ անգամ՝ թեր կամ դէմ, կամ մնալ ձեռնպահ: Անձերու ընտրութեան ատեն կրնայ քուէարկել այնքան անգամ, որքան ընտրելիներ կան, կամ մնալ ձեռնպահ:

գ.- Ընտրուած կը նկատուին կանոնագրային մեծամասնութեամբ քուէ ստացողները:

**ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ**

**Յօդ. 268.-** Բոլոր ժողովականները պարտին յարգել ժողովական կանոնները:

**Յօդ. 269.-** Ատենապետը, երբ կը վարէ ժողովը, պարտի վերմնալ ժողովի վեճերէն:

**Յօդ. 270.-** Ժողովական մը կրնայ ատենապետին թերացումը մատնանշել ժողովին: Կրկնութեան պարագային, կարելի է թերացող ատենապետին փոփոխութիւնը առաջարկել: Երբ առաջարկը երկրորդուի, խնդրոյ առարկայ ատենապետը իր տեղը կու տայ միւս ատենապետին (ատենապետի չգոյութեան պարագային՝ ատենադպիրին), որ առանց քննարկումի փոփոխութեան առաջարկը կը դնէ ձեռամբարձ քուէարկութեան: Երբ պարզ մեծամասնութեամբ ատենապետի փոփոխութիւն որոշուի, կ'ընտրուի նորը եւ նախկինը կը դառնայ պարզ ժողովական:

**Յօդ. 271.-** Ատենապետը իրաւունք ունի ժողովական մը կարգի հրաւիրելու՝ պահելու համար ժողովին կանոնաւոր ընթացքը եւ կարգը:

Ի պահանջեալ հարկին, ատենապետը կրնայ ժողովականի մը նկատմամբ ընել հետեւեալ կարգապահական տնօրինումները.-

- ա.- Ազդարարութիւն,
- բ.- Չայնի իրաւունքէ զրկում հարցի մը քննութեան ընթացքին,
- գ.- Չայնի իրաւունքէ զրկում որոշ ժամանակամիջոցի մը համար,
- դ.- Չայնի իրաւունքէ զրկում մինչեւ նիստի աւարտը:  
«Ըստ կարգի» ձայն առնելով՝ ենթակայ ժողովականը կըրնայ բողոքել եւ պահանջել, որ դիմուի ժողովի կարծիքին: Ժողովը իր կարծիքը կու տայ ձեռամբարձ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 272.-** Ատենապետին պահանջով կամ երկրորդուած առաջարկի մը հիմամբ, երկու երրորդի մեծամասնութեամբ՝ կարելի է ժողովէն հեռացնել անուղղայ կամ հակամիութեան կան ժողովական մը:

### **ԺՈՂՈՎԻ ՓԱԿՈՒՄ**

**Յօդ. 273.-** Ատենապետը կը փակէ ժողովը, երբ աւարտած է օրակարգի վրայ գտնուող բոլոր հարցերուն քննութիւնը եւ, ընտրութեան պարագային՝ ընտրուած են վարչականներ, ներկայացուցիչներ կամ պատգամատրներ:

Երբ երկրորդուած առարկութիւն կայ ժողովը փակելու դիւանի կարգադրութեան դէմ, կը դիմուի ժողովին, որ ձեռամբարձ եւ պարզ մեծամասնութեամբ կը յայտնէ իր կամքը:

Նոյնպէս, երբ, հակառակ դիւանի կարծիքին, երկրորդուած առաջարկ կայ փակելու ժողովը, նկատելով որ սպառած է օրակարգի բոլոր կէտերուն լուծումը՝ նոյն ձեւով կը դիմուի ժողովի կամքին:

### **ԺՈՂՈՎԻ ԱՌԿԱԽՈՒՄ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ**

**Յօդ. 274.-** Նուիրապետական կարգով գերադաս ժողով մը, գերադաս վարչութիւն մը կամ անոր լիազօր ներկայացուցիչը կրնայ առկախել եւ կամ լուծուած յայտարարել իրմէ ստորադաս ժողով մը, երբ որոշումը արդարացնող պատճառներ կան:

## Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

**Յօդ. 275.-** Հ.Մ.Ը.Մ.ի վարչությունները գործադիր մարմիններ են, որոնք կը վարեն միութեան գործերը եւ կը հսկեն իրենց ենթակայ կազմերու եւ ժողովներու գործունէութեան վրայ, իրաքանչիւրը՝ կանոնագրով ճշդուած իր սահմաններուն մէջ:

**Յօդ. 276.-** Հ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ վարչությունները՝ ընտրուած համապատասխան ժողովներու կողմէ,-

ա.- Մասնաճիւղի Վարչութիւն՝ ընտրուած Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ:

բ.- Սեկուսի Շրջանի Վարչութիւն՝ ընտրուած Սեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ:

գ.- Շրջանային Վարչութիւն՝ ընտրուած Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ:

դ.- Կեդրոնական Վարչութիւն՝ ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական Ընդհանուր Ժողովին կողմէ:

### ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳ

**Յօդ. 277.-** Հ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ նուիրապետական կարգը,-

ա.- Մասնաճիւղի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է իր շրջանի Շրջանային Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

բ.- Սեկուսի Շրջանի Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կեդրոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

գ.- Շրջանային Վարչութիւնը հաշուետու եւ ենթակայ է Կեդրոնական Վարչութեան, որ իրմէ անմիջականօրէն գերադաս Վարչութիւնն է:

**Յօդ. 278.-** ա.- Շրջանային Վարչութիւնը գերադաս է իր շրջանի որեւէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովէն:

բ.- Կեդրոնական Վարչութիւնը գերադաս է Սեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովէն եւ Շրջանային Ներկայացուցչական Ժողովէն:

**Յօդ. 279.-** Վարչութիւնները հաւաքաբար հաշուետու են զիրենք ընտրող ժողովներուն, իրենց բոլոր գործերուն համար:

## **ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԱԿԵՐԱՅՈՒՄ**

**Յօդ. 280.-** Նորընտիր վարչութիւնը իր պարտականութիւնները կը ստանձնէ ընտրութենէն անմիջապէս ետք:

**Յօդ. 281.-** Նորընտիր վարչութիւնը կը վաւերացուի իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կողմէ:

**Յօդ. 282.-** Նորընտիր վարչութեան վաւերացումը կը կատարուի հետեւեալ ձեւով.-

ա.- Վարչութիւնը ընտրած ժողովին դիւանը իրմէ անմիջականօրէն գերադաս վարչութեան կ'ուղղէ վարչական նոր կազմին օրինաւոր ընտրութիւնը հաստատող նամակ մը:

բ.- Նորընտիր վարչութիւնը, իր դիւանը կազմելէ անմիջապէս ետք, նամակով մը գերադաս վարչութեան կը տեղեկացնէ իր ընտրութեան արդիւնքը եւ իր դիւանին կազմը՝ խնդրելով անոր վաւերացումը:

գ.- Նորընտիր վարչութիւնը գերադաս վարչութեան կը փոխանցէ նաեւ զինք ընտրած ժողովին վերաբերող արձանագրութիւններուն եւ շրջանաւարտ վարչութեան տեղեկագիրներուն բոլոր պատճէնները:

**Ծանօթ.-** Նորընտիր վարչութիւնը իր վաւերացումը խնդրող նամակը կ'ուղարկէ անմիջապէս, առանց սպասելու ժողովի դիւանի հաստատագրին եւ միւս գրութիւններուն, որոնք կը փոխանցուին հետագային, երբ ի ձեռին ունենայ զանոնք:

## ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

**Յօդ. 283.**- Վարչութիւնը կ'ունենայ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ:

Վարչութիւնը կ'ունենայ նաեւ փոխ ատենապետ, փոխ ատենադպիր, հաշուապահ եւ, ի պահանջեալ հարկին՝ գոյքապահ մը, որոնք մաս չեն կազմեր դիւանին:

Վարչութիւնը կրնայ ունենալ երկու ատենադպիր, աշխատանքի յստակ բաժանումով՝ ատենագրութիւն, շրջաբերական, մամակագրութիւն, օտար լեզուով գրութիւն, եւ այլն:

Երկու ատենադպիրներն ալ մաս կը կազմեն դիւանին:

Մէկ ատենադպիրի պարագային, վարչութիւնը կրնայ ունենալ փոխ ատենադպիր մը, որ մաս չի կազմեր դիւանին:

Ատենապետին եւ ատենադպիրին բացակայութեան՝ փոխ ատենապետն ու փոխ ատենադպիրը կը կատարեն անոնց պաշտօնը եւ այս ձեւով կը մասնակցին դիւանի նիստին:

## ԴԻՒԱՆԻ ՊԱՇՏՕՆՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

**Յօդ. 284.**- Դիւանը իրմէ անմիջապէս գերադաս վարչութեան կը փոխանցէ վաւերացուած ատենագրութիւնը եւ իր առաքած շրջաբերականէն օրինակ մը, որպէսզի ան քայլ առ քայլ հետեւի վարչութեան գործունէութեան:

**Յօդ. 285.**- Դիւանը կը պատրաստէ վարչական նիստին օրակարգը:

## ԱՏԵՆԱՊԵՏ

**Յօդ. 286.**- Ատենապետը.-

- ա.- Կը բանայ եւ կը վարէ վարչական նիստերը:
- բ.- Չայն կու տայ խօսք ուզող վարչականներուն:
- գ.- Կը պահէ ժողովին կարգն ու կանոնը:
- դ.- Կը փակէ նիստը:

**Յօդ. 287.**- Ատենապետը վարչութեան ներկայացուցիչն է եւ իր այս հանգամանքով.-

ա.- Կը հետեւի վարչութեան որոշումներու գործադրութեան եւ, ի պահանջեալ հարկին, մղում կու տայ անոնց:

բ.- Ստիպողական պարագային, նիստէ դուրս կը կատարէ վարչական ընթացիկ կարգադրութիւններ, որոնց համար հաշի կու տայ վարչութեան:

գ.- Վարչութիւնը կը հրաւիրէ բացառիկ նիստի:

դ.- Կը տանի վարչութեան յարաբերական գործը, բացի այն մարզերէն ներս, ուր վարչութիւնը ունի իր ներկայացուցիչը:

ե.- Կը ստորագրէ վարչական նիստերու վաւերացուած ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

## ԱՏԵՆԱԳՊԻՐ(ՆԵՐ)

### **Յօդ. 288.- Ատենադպիրը.-**

ա.- Կը պահէ նիստի ատենագրութիւնը: Ատենագրութեան մէջ կ'արձանագրէ նիստին կարգաթիւր, գումարման թուականն ու վայրը, ներկաներուն եւ բանաւոր բացականներուն անունները:

Ատենագրութեան մէջ կ'անցընէ նաեւ ստացուած նամակներուն բովանդակութիւնը՝ իրենց ստացման թուականով եւ կարգաթիւով, գրուելիք նամակներուն եւ շրջաբերականներուն բովանդակութիւնը, իրագործուած աշխատանքներուն զեկուցումը:

Նոյնպէս, հարցի մը քննութեան ընթացքին արտայայտուած միտքերը, տեսակէտները, եղած առաջարկները եւ առարկութիւնները՝ իրենց հիմնաւորումներով եւ, ի պահանջեալ հարկին՝ առաջարկը ընող կամ առարկող վարչականներուն անուններով:

Յստակօրէն կ'արձանագրէ նաեւ առնուած որոշումները եւ յանձնուած պարտականութիւնները:

բ.- Յաջորդ նիստին ատենադպիրը պատրաստ վիճակի մէջ կը ներկայացնէ ատենագրութիւնը՝ առ ի վաւերացում:

գ.- Կը ստորագրէ վարչական նիստերու ատենագրութիւնը եւ վարչութեան նամակները:

**Ծանօթ.**- ա.- Նոյն նիստի աւարտին, վարչականներու փափաքով, ատենադպիրը կը ներկայացնէ նիստին ատենագրութեան սեւագրութիւնը կամ հոն տեղ գտած կէտերը:

բ.- Վարչութեան որոշումով՝ կը պահէ որոշումներու տետրակը, ուր կ'արձանագրուին առնուած որոշումները՝ իրենց թուականներով եւ զանոնք գործադրողներու անուններով:

գ.- Վարչութեան վերաբերող բոլոր գրութիւնները կը դասաւորէ յատուկ թրթածրարներու մէջ եւ կը պահէ վարչութեան փոխանցուած արխիւները:

դ.- Կը պատրաստէ վարչութեան շրջաբերականները, մամակները եւ զանազան գրութիւնները:

## ԳԱՆՁԱՊԱՀ

### **Յօդ. 289.-** Գանձապահը.-

ա.- Կը կատարէ վարչութեան գանձումներն ու վճարումները՝ համապատասխան ստացագիրով: Կը կատարէ նաեւ դրամատնային գործողութիւնները եւ տեղեակ կը պահէ վարչութիւնը:

բ.- Կը հետապնդէ գանձումները:

գ.- Օրը-օրին կ'արձանագրէ նիւթական գործառնութիւնները՝ հաշուական տոմարի մուտքի եւ ելքի բաժիններուն մէջ:

## ՀԱՇՈՒՄԱՊԱՀ

### **Յօդ. 290.-** Հաշուապահը.-

ա.- Կը հետեւի գանձապահի նիւթական գործառնութիւններուն եւ հաշուապահութեան:

բ.- Կանոնաւոր կերպով կը պահէ հաշուական տոմարները՝ ըստ որդեգրուած հաշուապահական դրութեան:

գ.- Պարբերաբար վարչութեան կը ներկայացնէ զեկուցում՝ նիւթական եւ տնտեսական կացութեան մասին:

## ԳՈՅԸԱՊԱՀ

### **Յօդ. 291.-** Գոյքապահը.-

ա.- Կը պահէ վարչութեան գոյքերը եւ անոնց լրի ցանկը:

բ.- Իր մօտ կը կեդրոնացնէ նաեւ վարչութեան ենթակայ միատրներու ունեցած կարելոր գոյքերուն ցանկը:

## ՊԱՇՏՕՆԵԱՅ ՔԱՐՏՈՒՂԱՐ

**Յօդ. 292.-** Կեդրոնական Վարչութիւնը կամ Շրջանային Վարչութիւնը կրնայ ունենալ պաշտօնեայ քարտուղար մը, որ կ'օգնէ ատենապետին եւ դիւանի աշխատանքներուն: Վարչութեան արտօնութեամբ, ան կրնայ մասնակցիլ վարչութեան եւ դիւանի նիստերուն, առանց ձայն ունենալու:

**Ծանօթ 1.-** Կեդրոնական Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, առանց ձայն ունենալու:

**Ծանօթ 2.-** Շրջանային Վարչութեան պաշտօնեայ քարտուղարը կրնայ մասնակցիլ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին, առանց ձայն ունենալու:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՆԻՍՏ

**Յօդ. 293.-** Վարչութիւնը կը գործէ՝ գումարելով հերթական նիստեր: Նիստերուն կը քննուին միութեան վերաբերող հարցեր, կը լսուին զեկուցումներ, կը կարդացուին ստացուած մամակներ եւ գրութիւններ, կը նշանակուին պատասխանատու անձեր եւ կազմեր, կ'առնուին որոշումներ, եւայլն:

**Յօդ. 294.-** Վարչութեան գործը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին, Միութեան Ընդհանուր ուղեգիծին, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն, ինչպէս նաեւ՝ զինք ընտրած ժողովին, գերադաս ժողովին եւ գերադաս վարչութիւններուն որոշումներուն:

Վարչութեան գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրութիւններուն, ժողովական եւ վարչական կանոններուն, գերադաս ժողովներու եւ վարչութիւններու որոշումներուն:

Այլ մանաւանդ՝ վարչութեան գործը եւ գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի ոգիին:

**Յօդ. 295.-** Վարչութիւնը կ'որոշէ իր հերթական նիստերու գումարման օրը, ժամը, վայրը եւ տեւողութիւնը:

**Յօդ. 296.-** Վարչականները կրնան դիւանի ներկայացուցած օրակարգին վրայ աւելցնել նոր կէտեր:

**Յօդ. 297.-** Օրակարգին մնայուն կէտերն են.-

- Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում,
- Ատենագրութենէն բխած հարցեր,
- Կատարուած աշխատանքներու շուրջ զեկուցումներ,
- Գերադաս վարչութիւններէ ստացուած նամակներ եւ շըրջաբերականներ:

**Յօդ. 298.-** Նիստը օրինաւոր է, երբ ներկայ է վարչականներուն մեծամասնութիւնը:

**Յօդ. 299.-** Վարչութեան որոշումները կ'առնուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 300.-** Առնուած որոշում մը կարելի է վերաքննութեան ենթարկել՝ ձայներու երկու երրորդով: Չայն փոխարինող որոշումը կ'առնուի պարզ մեծամասնութեամբ:

**Յօդ. 301.-** Ժողովական մը խօսք կ'առնէ ատենապետէն ձայն ստանալէ ետք: Այլ ժողովական մը չի կրնար ընդմիջում կատարել: Շեղումի պարագային, ատենապետը զայն կրնայ կարգի հրաւիրել, իսկ ժողովական մը կրնայ «ըստ կարգի» յիշեցում կատարել:

## ԳԻՒԱՆԻ ՆԻՍՏ

**Յօդ. 302.-** Վարչութեան դիւանը կրնայ նիստ գումարել.-

ա.- Կանոնաւոր հերթականութեամբ,

բ.- Վարչականներու մեծամասնութեան բացակայութեան:

**Յօդ. 303.-** Գիւանի նիստերուն հիմնական որոշումներ կարելի չէ առնել: Գիւանի հերթական նիստերը կը ծառայեն պատրաստելու վարչական նիստերը: Այս նիստերուն կը կարողացուին ենթակայ կազմերու ատենագրութիւնները, զեկուցումները եւ գտումի կ'ենթարկուին ստացուած գրութիւններն ու նամակները:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԷՋ

**Յառաջ Նահատակ** 3

## ԸՆԴՀԱՆՈՒՐ

### Ծրագիր

Անուն 7  
Նպատակ 7  
Միջոցներ 8

### Կանոնագիր

Անդամակցութիւն 11  
Դրօշակներ 12  
Ժողովներ եւ Վարչութիւններ 13  
Մասնաճիւղ 13  
Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով 14  
Շրջան 15  
Շրջանային Ներկայացուցչական Ժողով 15  
Պատգամաւորական Ընդհանուր Ժողով 18  
Մասնաճիւղի Վարչութիւն 21  
Շրջանային Վարչութիւն 23  
Կեդրոնական Վարչութիւն 25  
Ընդհանուր Կանոններ 27  
Ընտրական 28  
Նիւթական Աղբիւրներ 28  
Յաշուական 29  
Մարզական 29  
Գոյքեր եւ Կալուածներ 30  
Կարգապահական 30

## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

### Ծրագիր

Անուն	37
Նպատակ	37
Միջոցներ	38

### Կանոնագիր

Անդամակցութիւն	41
Բաժանմունքներ	42
Կարգեր	43
Խոստում, Երդում, Դաւանանք, Նշանաբան, Նշանակ	44
Դրօշակներ	46
Վարչական Բաժանմունքներ	47
Մարմիններ	47
ա) Շրջանային Սկաուտական Խորհուրդ	47
բ) Սեկուսի Շրջանի Սկաուտական Խորհուրդ	50
գ) Սասնաճիւղի Սկաուտական Խորհուրդ	50
Ժողովներ	50
ա) Համա - Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումար	50
բ) Սասնաճիւղերու խմբապետներու ընդհանուր ժողով	51
Պաշտօններ	52
ա) Շրջանային ընդհանուր խմբապետ / խմբապետուհի	52
բ) Շրջանային խմբապետ եւ խմբապետուհի	54
գ) Սասնաճիւղի խմբապետ/ խմբապետուհի	55
դ) Միաւորի խմբապետ եւ խմբապետուհի	55
Աստիճանաւորական կազմ	55
Շարքերու Կազմակերպում	57
Կարգապահական - Պատժական	60
Տարազներ եւ Գոյքեր	63
Ընդհանուր Կանոններ	63

# ՀԱՄԱ - Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

## Նպատակ

Անդամակցութեան պայմաններ	67
Պատուիրակութիւններու կազմութիւն	68
Բանակումի կազմակերպչական դրութիւն	68
Սկաուտներու բաժանմունքներ	70
Բանակավայր	70
Ընդհանուր կանոններ	70

## ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

### Ժողովական կանոններ

Ժողովի բացում - Առժամեայ դիւան	75
Լիազօրագիրներու ստուգում	76
Մնայուն դիւան	76
Յանձնախումբեր	77
Ժողովի դիւանի պարտաւորութիւնները	79
Ժողովի օրինականութիւն	81
Օրակարգ	82
Ժողովական ընթացք՝ ձայն առնել եւ խօսիլ	83
Խօսքի տեսակներ	83
ա) Լուսաբանական Հարցում	84
բ) Ըստ էութեան արտայայտութիւն	84
գ) Առաջարկ	84
դ) Ըստ կարգի արտայայտութիւն	85
Տրուած որոշումի մը վերաքննութիւնը	85
Տրուած որոշումի մը բեկանումը	86
Քուէարկութիւն	86
Թեր, դէմ, ձեռնպահ	87
Մեծամասնութիւն	87
Ժողովական կարգապահութիւն	88
Ժողովի փակում	89
Ժողովի առկախում եւ լուծում	89

## **Վարչական կանոններ**

Վարչութիւններ	90
Նուիրապետական կարգ	90
Նորընտիր վարչութեան վաւերացում	91
Վարչութեան դիւան	92
Դիւանի պաշտօնն ու պարտականութիւնը	92
Ատենապետ	92
Ատենադպիր	93
Գանձապահ	94
Հաշուապահ	94
Գոյքապահ	94
Պաշտօնեայ քարտուղար	95
Վարչական նիստ	95
Դիւանի նիստ	97
Համագաղութային կառոյցը	98

